

ՀԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈ. ԶԱՆՓՈՂԱԳԹԱՆ

ՄԵԽԹԱՐ ԳՈՇԸ ԵՎ ՆՈՐ ԳԵՏԻԿԻ ՎԱՆՔԸ

Նոր Գետիկի վանքը գտնվում է Դիլիճանի շրջանի Գոշ գյուղում, հնում՝ Արցախի Քուստ գավառի Տանձուտա ձորում: Հիմնադրվել է 12-րդ դարի վերջերին և հանդիսացել է իր ժամանակի հյուսիսային Հայաստանի կարևոր կրթական և կուլտուրական օջախներից մեկը և սերտ կերպով կապված է վանքի հիմնադիր, ժամանակի մեծ գիտնական Մխիթար Գոշի գործունեության հետ:

Տանձուտա գեղատեսիլ ձորն իր բնական դիրքով շատ համապատասխան էր միջնադարյան վանական ճարտարապետության պահանջներին: Վայրի բնորոշ գծերն են՝ երեք կողմի անտառապատ լեռները, խոր ձորերում հոռոզ կարկաչուն գետակը, դեպի վանքի սարահարթը տանող դժվարանցանքի ճանապարհը:

Նոր Գետիկի վանքի հիմնական շենքերը որոշ խախտումներով պահպանված են մինչև մեր օրերը. նրանք բաժանվում են երկու խմբի և տեղավորված են այժմյան Գոշ գյուղի արևմտյան ծայրամասում գտնվող փոքրիկ ձորակի երկու կողմերում: Հուշարձանի հիմնական խումբը տեղավորված է գյուղի հյուսիսում գտնվող սանձանափակ սարահարթի վրա: Կենտրոնում բարձրանում է Աստվածածնի տաճարը՝ շուրջանակի քանդակազարդ գլուխ ունեցող գմբեթով: Մայր տաճարին կից է գավթի, որը արտաքուստ մի անշուք շենք է: Գավթի հարավային կողմում տեղավորված է ս. Գրիգորի առանց գմբեթ սալածածկ տանիքով եկեղեցին: Սրա պատերը, մուտքը և ներսի մանրամասները զարդարված են նուրբ քանդակներով: Մուտքի աջ և ձախ կողմերում տեղավորված են հրաշալի խաչքարեր: Այս եկեղեցու արևելյան պատի դիմաց և Աստվածածնի տաճարի հարավային պատին կից կառուցված են երկու իրար կից փոքրիկ մատուռներ: Մայր տաճարի հարավում գտնվում է 1231 թվի կառուցած ս. Գրիգորի հինգ խորան եկեղեցին: Գավթի հյուսիսային պատի մոտ, անջատված գավթից փոքրիկ կամարակապ տանիք ունեցող միջանցքով, գտնվում է գրատուն-գանգակատունը: Սրան

կից է եղել մարտիրոսաշեն ժամատունը, որից այժմ պահպանված է միայն քարե պատերի ներքին մասը: Այս սարալանջի վրա եղած մյուս շենքերի հետքերը չեն պահպանվել: Սարալանջի վրա մնացել են միայն վանքի պարսպի մասնակի հետքերը:

Վանքի ճարտարապետական երկրորդ խումբը գտնվում է գիմաղի՝ հարավ-արևմտյան սարալանջի վրա: Այստեղ է ս. Գևորգի փոքրիկ ժամուռը, Գոշ Մխիթարի դամբարանի ավերակները: Համաձայն մեզ հասած տեղեկությունների, այս սարալանջի վրա է եղել տեղավորված նաև Մխիթարի ընկարանը¹:

Այժմ քանդված է զանգակատան դմբեթը, խախտված է Աստվածածնի տաճարի տանիքը, խախտված են մատուռները: Քանդված են եղել առաջին և երկրորդ ս. Գրիգորի տանիքները, որոնք վերականգնված են 1937 թ. Հայաստանի Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեի կողմից:

Այժմյան այդ կիսավեր վանքը իր ժամանակին խոշոր կուլտուրական և անգամ քաղաքական դեր է խաղացել հայ. ժողովրդի կյանքում:

Նոր Գետիկի վանքի միաբանություն կյանքի և գործունեության մասին տեղեկությունները հասնում են մինչև 14-րդ դարը, որից հետո, նա կորցնում է իր նախկին դերը և հետըզհետե վեր է ածվում մի փոքր և աննշան վանքի, որը պահպանվում էր էջմիածնի կողմից նշանակված վանահայրերի միջոցով: Վանքի շուրջը այժմ տեղավորված է մի փոքր զյուղ, որը վանքի հիմնադիր Մխիթար Գոշի հիշատակին Գոշ է կոչվում:


Նոր Գետիկը և հատկապես նրա պատմական անցյալը հետաքրքրություն առարկա է դառնում 19-րդ դարից սկսած: Այս դարի ընթացքում մի քանի աշխարհագրագետների, ճանապարհորդների և պատմաբանների ուշադրություն է գրավել այս վանքը, որոնք որոշ տեղեկություններ են տալիս նրա մասին: Ոմանք նույնիսկ արդարացրում են մի քանի վիմական արձանագրություններ: Ցավոք, եղած գրականությունը գլխավորապես միայն նկարագրական ընույթ ունի: Դրանցից հայտնի են.

1. Ղուկաս վարդապետ Ինձինեան—Ստորագրություն հին Հայաստանեայց. Մեծ Հայք, Վենետիկ, 1822: Այս աշխատու-

¹ Կրակոս Գանձակեցի—«Պատմություն հայոց» Թիֆլիս, 1909, էջ 205:

Թյան Վեջ ի մի են հավաքված հին և միջին դարերի պատմագիրների մոտ եղած տեղեկությունները պատմական հին վայրերի և անունների մասին, որոնք ճշտված և ուղղված են ոչ միայն հայկական աղբյուրներով, այլ նաև հունական, հռոմեական և սառաական աղբյուրների միջոցով:

357 էջում կան որոշ պատմա-աշխարհագրական տվյալներ Նոր Գեորգիի մասին, որոնք գլխավորապես վերցված են Կիրակոս Գանձակեցուց:



Նկ 1. Վանքի ընդհանուր տեսքն արևմուտքից

2. Սարգիս Վարդապետ Զալախանց — «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», հատոր Ա, մասն Բ., Տփլիս, 1842 թ.:

Հեղինակը տալիս է Նոր Գեորգիի հուշարձանների համառոտ նկարագիրը և վանքի կարճատև պատմությունը: Տպագրված են նաև 28 լիժական արձանագրություն:

3. Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց — «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւառացի Արարատայ»: Էջմիածին, 1842 թ.: Աշխարհագրական-հնագիտական աշխատություն է:

Երկրորդ հատորի մեջ տպագրված է Նոր Գետիկի 3 վիմական արձանագրութիւնը:

4. Հ. Մանուել Վ. Քաջունի—«Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց», Վենետիկ, 1857 թ.:

124 էջում ունի պատմա-աշխարհագրական մի փոքր հաղորդում Նոր Գետիկի մասին:

5. «Գոշ Մխիթարի վանքը» անստորագիր հոդված «Արաքս»-ում, Պետերբուրգ, 1882 թ., գիրք Բ, էջ 40—42: Ընդհանուր ծանոթութիւն պարունակող նկարագրական հոդված է: Ունի վանքի ընդհանուր տեսարանի լուսանկարը և մեջ է բերված մի արձանագրութիւն:

6. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց—«Տեղագիր Գեղարքունի ծովադարձ գաւառի, որ այժմ Նոր-Բայազետ գաւառ», Վաղարշապատ, 1895 թ., էջ 170—178: Ծանալարհորդական հիշգրութիւններ, որոնք իրենց մեջ պարունակում են պատմա-հնագիտական, ազգագրական բնույթի հարուստ նյութ: Օգտագործած նյութը հեղինակը բարեխղճորեն համեմատել է իրենից առաջ եղած աշխատութիւնների հետ: Նոր Գետիկից հրատարակած է 3 արձանագրութիւն:

7. Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց—«Արցախ», Բագու, 1895 թ.: Պատմա-աշխարհագրական, հնագիտական, ազգագրական նկարագրական աշխատութիւն: Նոր Գետիկին հատկացված է 343—356 էջերը: Բարեխղճորեն նկարագրված են վանքի եկեղեցիները և ընդօրինակված է 12 արձանագրութիւն:

8. Հ. Ղևոնդ Ալիշան—«Հայապատում», Վենետիկ, 1901 թ., էջ 401—405, հոդ. 237, ա, բ, գ, դ.:

Վերապատում է Գանձակեցու Պատմութեան Մ. Գոշին և Նոր Գետիկին վերաբերող գլուխները:

9. Իսահակ Հարութիւնյան—«Գոշա վանք կամ Նոր Գետիկ», «Ազգագրական Հանդես», 10, 1903 թ., էջ 5—38: Պատմական նկարագրական հոդված, 11 էջերում տալիս է պատմական տեղեկութիւններ Մխիթար Գոշի կենսագրութեան և գործունեութեան մասին: Յուրաքանչյուր հուշարձանի համառոտ նկարագիրը տալուց հետո, տեղավորում է նրա արձանագրութիւնները: Զի նշում արձանագրութիւնների նախորդ հրատարակութիւնները: Հրատարակված է 65 արձանագրութիւն: Ն. Գետիկի մասին նշածս գրականութիւնից ամենալիարժեք և բարեխիղճ:

գործն է: Արձանագրությունները հավաքել է անձամբ ինքը:
 10. Հ. Ս. Էփրիկյան—Պատկերազարդ բնաշխարհիկ բառա-
 րան, հ. Ա., Վինետիկ, 1903—05: Տեղեկությունները վերցրել է
 Գանձակեցուցի:

11. Հ. Սպանդիարեան—«Մխիթար Գորշի վանքը», Մշակ,
 1911 թ. № 16, 17, 18: Հեղինակն իր այս հոգովածն անվանում
 է «Ամառային հիշողություններ», բովանդակում է Գանձա-
 կեցուց, Բաստամյանից և «Արցախից» քաղված տեղեկություն-
 ներ Գորշի և Նոր Գետիկի մասին: Տպագրել է 54 արձանա-
 գրություն: Հոգովածի վերջում խոսում է նաև Զուխտակ վանքի
 մասին:

12. Кучук-Иоаннесов—«Сведения и заметки о ста-
 ринных надписях находящихся в пределах России».

Древности Восточные, т. IV, Москва, часть V.

Հեղինակն ինքը՝ վանքը և արձանագրությունները չի տե-
 սել: Հոգովածը կազմված է Գանձակեցու Պատմության, Սպան-
 քիարյանի հոգովածի, Բարխուդարյանի «Արցախի» հիման վրա.
 մեջ է բերել 12 արձանագրություն, որոնք քաղել է «Արցախից»:

13. Կ. Կոստանեպնց—«Վիմական Տարեգիր» ցուցակ ժողո-
 վածոյ արձանագրութեանց Հայոց, Ս. Պետերբուրգ, 1913: Օգ-
 տագործել է իրենից առաջ հավաքած և հրատարակած արձանա-
 գրությունները, արտագրելով այն Զալալյանից, Շահխաթունյա-
 նից, Բարխուդարյանից: Հրատարակել է ընդամենը 8 արձանա-
 գրություն:

14. Հ. Հ. Ոսկեան—«Մխիթար Գորշ», «Հանդես ամսօրյա»
 1925 թ., 548—561: Տրված է Մխիթար Գորշի մանրամասն կեն-
 ագրությունը: Նկարագրված է նաև Նոր Գետիկի վանքը և
 նրա շինարարարությունը: Օգտագործված է Սմբատյանի և
 Կոստանյանցի վերոհիշյալ աշխատությունները: Տպագրել է մեկ
 արձանագրություն:

15. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանց—«Նյութեր և
 ուսումնասիրությունների հայ արվեստի և մշակույթի պատմու-
 թյան», պրակ Ա, Երուսաղեմ, 1935 թ.: «Վախտանգ որդի Ումե-
 կա» հոգովածում խոսում է Նոր Գետիկի մասին, որպես Ումեկյան-
 ների տոհմական կալվածքի: Տպագրել է 2 արձանագրություն:

16. Հ. Թումյան—«Պորհրդային Հայաստանի պատմական
 հուշարձանները: Դրվիջանի շրջան: Ուղեցույց-ալբոմ շրջանի
 հնագիտական քարտեզով», ռուսերեն, աղբյուրներն և ֆոտո-

սերեն ամփոփումներով, Երևան, 1937 թ.: Նոր Գետիկի վանքի կարճատև նկարագրությունը, արտատպված «Արցախից»:

Ունի 11 լուսանկար:

17. Н. М. Токарский — „Архитектура древней Армении“, Ереван, 1946 г. (248, 250, 257, 261, 268, 280, 285, 286, 290, 291, 307, 310, 313—315, 317, 319). Հայ հին ճարտարապետության որոշ էտապների կապակցությամբ խոսում է Ն. Գետիկի վանքի որոշ առանձնահատկությունների մասին:

* *

Այս աշխատության հիմնական աղբյուր են ծառայել Նոր Գետիկի վիմական արձանագրությունները, դեռևս 1917 թ. տեղում բնագործնակված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ձեռքով, որը և 1942 թվականին մեծ սիրալիրությամբ ինձ արամագրելով իր սեագրությունները, գործողեց Նոր Գետիկի արձանագրությունները տեղում ստուգելու և լրացնելու համար:

Հիշյալ արձանագրությունները լրացնելու և ճշտելու համար որպես հիմնական աղբյուր օգտագործել եմ նաև Կիրակոս Գանձակեցու Հայոց Պատմությունը: Գանձակեցին ինքը եղել է Նոր Գետիկի սան, աշակերտել է Գոշի աշակերտ Վանական վարդապետին և իր կյանքի մեծագույն մասն անց է կացրել այդ վանքում: Գանձակեցին երեք գլուխ է նվիրում Նոր Գետիկի կյանքին և պատմությանը՝

— «Վասն շինութեան վանացն Նորն Գետիկայ»,

— «Թէ որք էին, որք երեկիք էին յաշակերտսն նորա»,

— «Վասն որք յետ նորա կալան առաջնորդութիւն»:

Կիրակոսը եղել է ականատես և մասամբ մասնակից այն անցքերի, որը ինքը նկարագրում է: Նա մեկն է միջնադարյան, այն հայ պատմիչներից, որոնք չնայած այն բանին որ գրում են իրենց ժամանակաշրջանի պատմությունը և հենվում են գլխավորապես իրենց գիտեցածի և տեսածի վրա, բայց երբեք չեն մոռանում իրենց դործի պատասխանատվությունը և անընդհատ ստուգում ու ճշտում են փաստերը: Կիրակոս Գանձակեցին իր Պատմության համար մեծ չափով օգտագործել է Նոր Գետիկի վիմական արձանագրությունները, երբեմն ամբողջովին բերելով նրանց բովանդակությունը:

Որպես օժանդակ աղբյուր է ծառայել նաև Նոր Գետիկի վանքի ճարտարապետական չափագրությունը, որը կապարել է Հայ. Պատմ.

Հուշ. Պահպանութեան Կոմիտեի 1942 թվի գիտ. արշավը ճարտարապետ Ռ. Իսրայելյանի ղեկավարութեամբ:

Այս Հափաղբութեան գիտա-ճարտարապետական ուսումնասիրութեանը ղեկուս չկա. իմ աշխատութեան մեջ օգտագործված է Հրատարակված նյութը, որի օգտագործման համար իմ խնդրքին Կոմիտեի նախագահութեանը տվի է իր սերավոր թույլտվութեանը:

* * *

Մեկուկես դար Գոշրից առաջ (1045 թ.) Հայաստանը կորցրել էր իր պետականութիւնը: Այդ ժամանակամիջոցում միջին-ասիական քոչվոր սելջուկները արհավիրքի նման ներխուժելով երկիրը, կողոպտել, ավերել էին այն և հաստատել էին իրենց ինքնակալութիւնը: Սակայն նրանք երկար չեն կարողանում պահպանել իրենց իշխանութիւնը. նրանք քայքայվում են և մասնատվում մանր իշխանութիւնների: Օգտվելով դրանից, նրանց տիրապետութեան տակ եղած տեղական ժողովուրդները սկսում են կամայկամայ սթափվել և աշխուժանալ: Սրանցից ամենից երջանիկ վիճակումն էր Էրաստանը, որն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ հեռու մնալով ասպատակութիւնների անմիջական ոլորտից, կարողացել էր, ճիշտ է, ճնշված և թալանված, բայց պահպանել իր իշխանութիւնը և հարմար առիթին ոտքի կանգնել ու ազատագրել իր հայրենիքը օտարի լծից և օգնութեան ձեռք մեկնել իր հարևաններին:

12-րդ դարում Սելջուկյան իշխանութեան թուլացման շրջանում տեղի էին ունեցել նաև խոշոր փոփոխութիւններ երկրի տրնտեսական կյանքում, ուժեղ թափով սկսել էին դարգանալ արհեստը և առևտուրը, որոնց համար սելջուկյան տիրապետութեան ժամանակաշրջանում, անկախ տիրապետողների կամքից, ստեղծվել էր շատ հարմար միջավայր և պայմաններ: Արհեստավորները չնայած դեռևս բազմաթիվ կապերով կապված էին ֆեոդալական հարաբերութիւնների հետ, բայց նրա կյանքում արդեն խոշոր դեր էին խաղում ապրանքը և դրամը: Ընդարձակվել և մեծացել էին առևտրական հարաբերութիւնները, զարգացել էր արհեստագործութիւնը: Փոխվում էր նաև քաղաքների բնույթը. քաղաքները դուրս էին գալիս ֆեոդալական պարիսպներից, նրանք բազմաճանաչում ու հարստանում էին, դառնում բազմամարդ,

քաղմարհետ, մարդաշատ և հարուստ շուկաներով ու խանապարներով:

Առաջանում են նաև նոր տիպի ֆեոդալներ, որոնց իշխանության հիմքում չի դրված այլևս դարավոր ժառանգական իրավունքը, սրանց կյանքում ևս մեծ դեր էր խաղում ապրանքը և դրամը:

Հայաստանում այս նոր տիպի իշխաններից են հյուսիսային Հայաստանի Արծրունիները, Զաքարյանները, Պռոշյանները և ուրիշները:

Ձեռք բերելով տնտեսական մեծ ուժ, այս իշխանները ձգտում էին նաև քաղաքական իշխանության, սակայն հայրենիքում զրկված լինելով այդ հնարավորությունից, նրանք իրենց համար ասպարեղ են փնտրում հարևանների մոտ: Այսպես՝ Արծրունիները և Զաքարյանները խոշոր դեր էին խաղում վրացական արքունիքում: Զաքարյանները վարում են զորքերի գերագույն հրամանատարությունը և աթաբեկությունը: Արծրունիները ունեին ամիրայության պաշտոն և այլն: Սրանք կարողանում էին օգտագործել այդ պաշտոնները հօգուտ իրենց հայրենիքի: Օրինակ Զաքարյանները նվաճելով Հայաստանի զգալի մասը սելջուկներից, այնտեղ հաստատում են իրենց տնտեսական և քաղաքական փաստական իշխանությունը:

Հայոց պատմության այս ժամանակաշրջանի (12-րդ դարի վերջը, 13-րդ դարի սկիզբը) պատմությունը սերտ կերպով կապված է Զաքարյանի տոհմի հետ: Այս տոհմի ներկայացուցիչներն են, որոնք ոչ միայն ազատագրում են թշնամու կողմից զրավված շրջանները, այլև վերականգնում են քարուքանդ եղած տնտեսությունը: Երկիրը խաղաղվում է, սկսվում է շինարարական և ստեղծագործական մի ուժեղ գործունեություն: Կառուցվում և վերակառուցվում են ավերված գյուղերն ու քաղաքները: Հատկապես մեծ թափ է ստանում եկեղեցաշինարարությունը, որոնց մեծապույն մասի մեկենասներն էին հենց իրենք Զաքարյանները:

Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրողները¹ այս ժամանակաշրջանը համարում են հայ ճարտարապետության «4-րդ վերածնունդ» և որովհետև կառուցված շենքերի մեծ մասը

¹ Թ. Թորամանյան — «Հայկական ճարտարապետություն», Երևան, էջ 99, 1942 թ.:

կապված է Ձաքարյանների անվան հետ, ապա և անվանում են «Ձաքարյան վերածնունդ»:

Սակայն Ձաքարյանների այս քաղաքականությունը հանդիպում էր հատկապես հոգևորականության խիստ դիմադրություն:

Բանն այն է, որ Բագրատունյաց հարստության անկումից հետո և հատկապես սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանում, երբ ժողովրդի թե՛ կյանքը և թե՛ ունեցվածքը անընդհատ հարստահարության և ոչնչացման վտանգի տակ է եղել, հոգևորականությունը և վանքերը հանդիսանում էին այն նեցուկը, որոնց վրա հենվում և օգնությունը դիմում էր անպաշտպան ժողովուրդը: Սրա հետևանքով ժամանակի ընթացքում հոգևորականությունը և վանքերը շատ հզորանում էին և հետզհետե իրենց ձեռքն են առնում նաև աշխարհիկ իշխանության որոշ ֆունկցիաներ:

Այսպիսի վանքերից ամենախոշորներն են Հաղբատի եպիսկոպոսանիստ վանքը և Սանահնի վանքը:

12-րդ դարի վերջում աշխարհիկ իշխանության ուժեղացումով պակասում է նաև հոգևորականության նախկին իշխանությունը, որը և մեծ դժգոհություն է առաջացնում նրանց մեջ և ստեղծում է ընդդիմադրություն ընդդեմ զարգացող աշխարհիկ իշխանությունը: Ընդդիմադրությունը հատկապես Ձաքարեի ժամանակ մեծ չափերի է հասնում:

Հավագույն միջոցը, որը կարող էր մտածել Ձաքարեն, դա հաշտության, միմյանց դիջողությունների ճանապարհն էր, սակայն սրա համար անհրաժեշտ էր, որպեսզի Ձաքարեն հենվեր ոչ միայն իր ուժի և հեղինակության, այլև հեղինակավոր և արդեցիկ հոգևորականի և վանքի վրա: Ահա այդպիսին է հանդիսանում Մխիթար Գոշր և նրա հիմնած Նոր Գետիկի վանքը:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇՐԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մխիթար Գոշրի կենսագրության մասին քիչ թե՛ շատ մանրամասն տեղեկություններ մեզ տալիս է Կիրակոս Գանձակեցին, Վերջինս հաղորդում է նաև, որ Գոշրի մանրամասն կենսագրությունը դրած ունեի Վանական վարդապետը, որը ցավոք մեզ չի հասել: Հավանաբար Կիրակոսն էլ օգտվել է նրանից:

Գանձակեցին իր Պատմութեան մեջ երկու գլուխներ է նվիրել Մխիթար Գոշի կյանքին և գործունեութեանը:

«Վասն վարդապետին Մխիթարայ թէ ուստի էր և կամ թրպիսի ոք»:

«Վասն վախճանի մեծ վարդապետին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի»:¹

Մխիթար Գոշի կենսագրութիւնը կա նաև Հայսմաւուրքում մեհեկի Ե-ի կամ փետրվարի ԺՎ «Վարք և պատմութիւն Գոշին Մխիթարայ»:² Կազմված է հիմնականում Գանձակեցու Պատմութեան հիման վրա:

Որոշ տեղեկութիւններ էլ կարելի է քաղել Մխիթար Գոշի ա. Դատաստանագրքի նախագրութիւնից³ և

բ. «Մեկնութիւն համառօտ մարգարէութեան Նրեմիայի», աշխատութեանը⁴ կցված իր հիշատակարաններից:

Մի փոքրիկ տեղեկութիւն էլ ունի Վարդան վարդապետը:

Հետագայում Գոշի գործունեութեան զանազան բնագավառներն ուսումնասիրելու կապակցութեամբ, կամ միջնադարյան պատմութեան շարադրութեան կամ այլ և այլ առիթներով զբված է եղել Մխիթար Գոշի կենսագրութիւնը, բոլորն էլ հիմք են ունեցել վերոհիշյալ աղբյուրները:⁵

Մխիթար Գոշի ծննդյան թիվը հայտնի չի: Մեզ հաւանա-կան է թվում Ոսկյանի ընդունած 1130 թ., քանզի երբ Գան-

¹ Գանձակեցի—Պատմութիւն հայոց:

² Պեա. Մատենադարան, ձեռ. 8147:

³ Մխիթար Դոս—«Դատաստանագրքը Հայոց»:

⁴ Պեա. Մատ. Ձեռ. № 2606, էջ 233:

⁵ Վարդան Բարձրբերդցի—«Պատմութիւն տիեզերական», էջ 181:

⁶ Եղած մեծածավալ գրականութիւնից կարելի են հիշատակել Չամչեան—«Պատմութիւն Հայոց», հ. Գ.

Հ. Գ. Զարբնամուլեան—«Հայկական հին դպրութեան պատմութիւն»:

Վենետիկ, 1837, էջ 868—697:

Ալեքան—«Հայապատում», էջ 297, 298, 401—408:

Թմամեան—«Ազգապատում», 1080, 1087, 1092:

Բաստամեան—Մխ. Գոշի «Դատաստանագրքը Հայոց» առաջաբան:

Հ. Հ. Ոսկեան—«Մխիթար Գոշ», Հանդես ամսօրյա, 1925, 548—561:

Խ. Սամուելյան—«Հին հայ իրավունքի պատմութիւն», հ. Ա, Երևան, 1939:

Н. Марр—Сборник притч Вардана, ч. I, стр. 65—66:

Մ. Արեղյան—Հայոց հին գրականութեան պատմութիւն, հ. Բ, 142—158:

ձակեցին 1213 թվին խոսում է նրա վախճանի մասին, գրում է «ալիորեալ և լի առուրք»:

Ծնվել է Գանձակում:

«Հոգեակաւորն այն և մեծ իմաստն գիտնականութեամբ՝ էր ի քաղաքէն Գանձակայ...»¹

Գանձակը 12—13-րդ դարերում կովկասի խոշոր առևտրական կենտրոններից էր. բնակվում էին այնտեղ և մահմեդականներ և քրիստոնյաներ, սակայն այս հանգամանքը չէր խանգարում քաղաքի ներքին հաշտ ու համերաշխ կյանքին: Երկու աղգերն էլ ապրում էին միասնական տնտեսական և կուլտուրական կյանքով, վերջինիս ապրով միայն իրենց հատուկ կրոնական երանգավորումը:

Գանձակը թե այժմյան ադրբեջանցիների և թե հայերի պատմական անցյալում խաղացել է խոշոր դեր:

Մխիթարը պատմագրության մեջ հայտնի է որք մականունով. Գոշատացի է դեմքի մաղերը ուշ բռնանելու և քիչ լինելու հետևանքով. այդ կոչումը ամենատարածվածը և ընդունվածն է: Հանդիպում է նաև Գանձակեցի և Գետիկցի: Այս վերջին երկուսը համեմատաբար շատ քիչ են հայտնի:

Մխիթարի ծնողների և ընտանիքի մասին մենք շատ աղետ տվյալներ ունենք: Գանձակեցին գրում է.

«...քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք ետուն զնա յուսումն Գրոց սրբոց»:²

Այստեղից և իմանում ենք, որ Մխիթարը մանուկ հասակից ուսման է տրվել և հավանաբար նվիրվել է վանքին, որովհետև երիտասարդ հասակում նա արդեն կուսակրոն է դառնում:

«...եւ իբրեւ եհաս նա յարբունս հասակի, ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրոն»:³

Երիտասարդ կուսակրոն քահանան եղել է շատ ուսումնասեր և ջանասեր: Ստանալով քահանայություն, նա շարունակում է իր ուսումը:

«Եւ պաշտեալ զքահանայութիւնն յովով ամս՝ ցանկացաւ հմուտ լինել Գրոց սրբոց, և առակաց խորոց՝ որ կան ի նոսա»:⁴

¹ Կ. Գանձակեցի, էջ 95:

² Նույնը:

³ Նույնը:

⁴ Նույնը:

Այնուհետև աշակերտում է ժամանակի նշանավոր ուսուցիչ Հովհաննես Տավուշեցուն: Տավուշեցին եղել է ժամանակի նշանավոր քարոզիչներից, նա իր քարոզները կարդում էր շրջելով տեղից տեղ: Այս շրջագայությունների ժամանակ սկսում է նրան ուղեկցել նաև Մխիթար Գոշը:

Տավուշեցու մասին Չամչյանը գրում է.

«Յաւուրս սորա (Ն. Լամբրոնացու) մանաւանդ, թէ փոքր մի յառաջ ի ժամանակս Շնորհալուոյն երևելի եղև սրբութեամբ վարուց ի մեծն Հայս վարդապետ ոհմ: Յովհաննէս կոչեցեալ ի Տաւուշայ: Սա յառաջն էր յաշխարհական կարգի և ի մեռանիլ ամուսնոյ իւրոյ հրաժարեալ յաշխարհէ դնայ յանապատ, և յետ բազում ճգնութեամբ վարելոյ զկեանս իւր էջ յանապատէ և սկսաւ շրջիլ քաղաքէ ի քաղաք և քարոզել զուղղութիւն վարուց: Եւ զի զոր քարոզէրն գործովք ցուցանէր, բանք նորա ազդու լինէին յոյժ առ ամենսսինս»¹

Բացի Տավուշեցուց, Մխիթարը անշուշտ աշակերտել է նաև ուրիշներին. վերջիններիս անունները մեզ անհայտ են:

Դեռևս երիտասարդ հասակում Գոշը ստանում է վարդապետություն և ինքնուրույն քարոզելու իրավունք: Սակայն երիտասարդ վարդապետը չբավարարվելով սրանով և ցանկանալով էլ ավելի խորացնել իր գիտությունը ու նոր գիտելիքներ ձեռք բերել, ճանապարհվում է Կիլիկիայի նշանավոր Սև լեռան դպրոցը:

Չամչյանը այս դեպքը դնում է 1163 թ.: Այս թվականի աղբյուրը մեզ համար անհայտ է, բայց թվում է հավանական:

Կիլիկիան այդ ժամանակ այն բախտավոր երկիրն էր, որտեղ Բագրատունյաց թագավորության անկումից մեկ ու կես դար հետո նորից գլուխ էր բարձրացնում հայկական անկախ իշխանությունը, հանձին Ռուբինյան իշխանության:

Կիլիկիան իր աշխարհազրական դիրքի հետևանքով գտնվում էր տնտեսական և քաղաքական նոր ոլորտի կենտրոնում: Մի կողմից դեպի Կիլիկիա էին գալիս խաչակիրները, մյուս կողմից եվրոպացի առևտրականներ, որոնք իրենց ճանապարհի վրա ապահով ապաստան էին գտնում քրիստոնյա իշխանության հարկի տակ: Այս ուժերի շփման հետևանքով շատ դարգանում էին տեղական առևտուրը և արհեստները: Տնտեսական նոր ուժի ազ-

¹ Չամչյան, հ. Գ., էջ 95:

գեցության տակ, գիտությունը և կուրտուրան նույնպես իր զարգացումն էր ապրում:

Ստեղծվում են գիտության բազմաթիվ կենտրոններ, որոնցից նշանավորներից մեկն է Սև լեռան դպրոցը:

Սև լեռան դպրոցը գտնվում է Միրիայի և Կիրիկիայի միջև անցնող Տավրոսյան լեռնաշղթայի համանուն կամ Սև լեռներ կոչվող թևի վրա: Ծնորհիվ այս վայրի անմատչելի դիրքի, հնուց ի վեր այստեղ ապաստարան էին գտել և հաստատվել հունական և սիրիական մի քանի քահանաներ և հիմնել էին իրենց դպրոցները: Ավելի ուշ ժամանակներում այստեղ հաստատվել էին նաև հայ վանականները: Հայկական վանքերից նշանավոր էր Կարմիր վանքը, որն իր անառիկ դիրքի հետևանքով կարված լինելով զրսի աշխարհի անախորժություններից, իրեն հարևան ունենալով հունական և սիրիական գիտնականներին, շուտով մեծ հռչակ և հեղինակություն է ստացել:

Սև լեռան դպրոցի սաներից են Ներսես Ծնորհալին և Ներսես Լամբրոնացին:¹

Ահա այս դպրոցն է գալիս Մխիթար Գոշը, և թաքցնելով իր վարդապետական կոչումը, սկսում է ուսանել որպես հասարակ քահանա և կրկին անգամ ստանալով վարդապետության աստիճան, վերադառնում է Հայաստան:

Վերադարձին Կարինում Մխիթար Գոշը ծանոթանում և բարեկամանում է Մանկանաբերդի իշխան Ամիր Բուրդ Արծրունուն,² որն այդ ժամանակ վրացական Գեորգի 3-րդ թագավորի կողմից հեռացված էր հայրենիքից և գտնվում էր Կարինում:

¹ Ալիսում—Շեքրես Ծնորհայի և պարագայ իւր:

² Հիշատակված Բուրդ իշխանը 12-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր անձնավորություններից է: Նա խոշոր դեր է խաղացել վրացական արքունիքում Գեորգի 3-րդի (1156—1184) և հատկապես Թամար թագուհու (1184—1213) ժամանակ:

Ս. Երեմյանը իր «Մանկանաբերդի Արծրունիներ» և «Юрий Боголюбский в армянских и грузинских источниках» անոթիկ աշխատությունների մեջ (հեղինակի թույլտվությամբ ես օգտագործել եմ այդ աշխատությունը, որի համար հայտնում եմ նրան խորին շնորհակալություն), մանրամասն քննում է Բուրդ իշխանի, նրա տոհմակիցների կյանքը և զործունեությունը նա գտնում է, որ հյուս. Հայաստանի այս Արծրունիները վասալուրականի Արծրունիները շատավիզներն են, որոնք հյուսիսային Հայաստան են տեղափոխվել 11-րդ դարում:

Բուրդ կամ Ամիր Բուրդ իշխանը եղել է Թիֆլիսի և Քարթլիի ամիրան (սա նրանց տոհմի ավագ ներկայացուցչի ժառանգական իրավունքն էր): Իր

«Եւ ելեալ նմա ծանօթ, սիրեցաւ ի նմանէ իբրեւ զհայր» գրում է Գոշի և Քուրդի բարեկամութեան մասին Գանձակեցիին¹

Մխիթար Գոշի և Քուրդի հանդիպումը տեղի է ունեցել Քուրդի առաջին աջօրի ժամանակ, այսինքն մինչև 1177 թիվը:

Կարինից Մխիթարը ուղևորվում է Գանձակ: Վերադառնալուն պես, նրա հուշակը տարածվում է երկրում և նրա շուրջն են հավաքվում բազմաթիվ աշակերտներ:

«Եւ յետ այսորիկ դարձաւ նա յաշխարհ իւր. և ել համբաւ իմաստութեան նորա ընդ ամենայն աշխարհս. և բազումք աշակերտէին նմա յուսումն վարդապետութեանս»²

Սակայն շուտով Մխիթարը ստիպված է լինում հեռանալ Գանձակից: Աղվանից Ստեփաննոս 2-րդ կաթողիկոսի հորդորանքով նա տեղափոխվում է Սաչեն՝ Վախտանգ Հաթիւրեցի³ իշխա-

տոնավիցների հետ մասնակցել է վրաց արքունիքում ծագած մի շարք դավադրությունների, երբեմն մասնակիցների, երբեմն ճնշողների շարքում: Սրա հետևանքով Գեորգի 3-րդ թագավորի կողմից երկու անգամ արքայրվել է հայրենիքից 1156 և 1177 թվականներին:

Առաջին անգամ 1156 թվի աջօրի ժամանակ նա իր կողոպտիկների հետ ապստամբում է Կարինում իրենց բարեկամ Կարինի էմիր Ալ-Մալիկ Սալիկի (1153—1156) մոտ: Սրանից ստանում է հյուրընկալութուն և կալվածքներ:

Թաժարա թաղուհին դա՛ն բարձրանալուց հետո 1185 թ. Ամիր Քուրդը վերջնականապես ազատվում է արքայից, վերադարձվում են նրա կալվածքները, պաշտոնը և նշանակվում է արքունիքում նացլալ մեհենդուխուցեսի (դանձապետի օգնական, ֆինանսների վիցե-մինիստր): Իր այս փառքի մեջ նա մեռնում է մինչև մահը (1190): Հայկական աղբյուրներում սա հայտնի է որպես Մահկանաբերդի և Կայանաբերդի տեր, վրացական աղբյուրներում՝ Աբդուլ Հասան: Վրացական մի արձանագրութուն նրան անվանում է Երեսթավաց էրեսթավ, Քարթլիի ամիրայայց ամիրայի Ռուսթավի և յոթը մթիուլեթի պատրոն Աբլլ Հասան:

Սա հայտնի է նաև որպես խոշոր առևտրական, որը կապեր է ունեցել ոչ միայն սելջուկների, այլ նաև Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հետ (Անդրեյ Բոգոլյուբսկու հետ):

Վախճանվել է 1190 թվին: Թաղված է իրենց տոնավան գերեզմանատանը՝ Հաղբատա վանքի զավթում:

Նրա լրիվ անունը և տիտղոսները ըստ Ս. Նրեմյանի հետևյալն են՝

Երեսթավաց էրեսթավ, Քարթլիի ամիրայայց ամիրայի, Ռուսթավի և յոթը մթիուլեթի պատրոն նացլալ մեհենդուխուցեսի Քուրդ Աբդուլ-Հասան Արծրունի:

¹ Գանձակեցի, 97:

² Նույնը:

³ Վախտանգի կինը Քուրդ Արծրունու դուստրն էր:

նի մոտ: Այնուհետև մենք նրան հանդիպում ենք Դասնու անապատի Հոռոմաշեն վանքում, որտեղ նա 1184 թ. կազմում է Հայոց առաջին աշխարհիկ օրենքների ժողովածու՝ Դատաստանագրքի նախադրությունը և ապա ձեռնարկում է նաև բուն Դատաստանագրքի կազմելուն: Դատաստանագիրքը¹ Մխիթար Գոշի ամենամեծ գործն է: Առաջին անգամ այդքան ժամանակամիջոցում դրի էին առնվում և օրինակացվում էին ժողովրդական օրենքները:

Դատաստանագիրքը կազմված է 3 մասից.

Նախադրություն, եկեղեցական կանոններ և աշխարհիկ օրենքներ:

Նախադրությունը մի գիտական տրակտատ է, կազմված 11 գլխից և մի փոքր հիշատակարանից: Այստեղ ամփոփված են Գոշի և նրա ժամանակի իրավաբանական հայացքները:

Մխիթար Գոշը մանրամասն բացատրում է այն բոլոր հանգամանքները, որի հետևանքով ինքն անհրաժեշտ է գտնում օրենքների ժողովածու կազմել: Մեկ առ մեկ թվում է իր օգտագործած բոլոր աղբյուրները: Քննարկում է մանրամասն դատական պրոցեսը, որի ժամանակ պահանջում է արդարադատութուն և ազնվութուն: Դատավորից և դատական պաշտոնյաներից պահանջում է բարոյական մեծ հատկութուններ և այլն:

Օրենսգիրքն ունի 254 հոդված, որից 124-ը եկեղեցական կանոններ, իսկ 130-ը՝ աշխարհիկ օրենքներ:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը ոչ միայն առաջինն է, որ մեր ձեռքն է հասել հայ ժողովրդի պատմության մեջ, այլ կազմել է ասել, եղել է միակը, քանի որ նրանից հետո եղած դատաստանագրքերը հիմնականում կրկնում են Մխիթար Գոշին:

Այս Դատաստանագիրքը անցել է պատմական շատ հետաքրքրական ճանապարհ: Հայաստանից հայ գաղթականների հետ նա տեղափոխվել է Արևմ, Ռուսաստան, Լեհաստան, օգտագործվել է հարևան Վրաստանում: Հասնելով մինչև 19-րդ դարը, իր որոշ հոգվածներով մասնակցել է նաև ռուսական, «Сводъ зако-
НОВ» ժողովածուին: Այսպիսով նրա ճանապարհը 12-րդ դարից մինչև 19-րդ դարը Հայաստան, Վրաստան, Կիլիկիա, Ռուսաստ-

¹ Մխիթար Գոշ.— Դատաստանագիրք Հայոց, հրատ. Բաստամյանի, 1880, Վաղարշապատ:

տան, Ղրիմ, Ղեհաստան և բոլոր այն երկրները, որտեղ բնակություն են հաստատել հայ գաղթականները¹։

Ամիր Քուրդի 1185 թ. Կարինից վերադառնալուց հետո Մխիթարը թողնում է Դասնո անապատը և տեղափոխվում է Կայինո գավառ, ուր հաստատվում է Գետիկ վանքում, որտեղ վանահայր էր նրա աշակերտ Սարկավագ վարդապետը։ Այս վանքում եղած ժամանակամիջոցում նա գրել է «Մեկնութիւն համառոտ մարգարէութեան Նրեմիայի»² աշխատությունը, որը հիշատակարանի համաձայն, գրված է մեկ տարվա ընթացքում և ավարտած՝ 1188 թ.։

«...և զի սկիզբն արարք այսմ իրողութեան ի թուակահիս Հայոց ՈԼՁ (1187) և կատարեցաք զկնի միոյ ամիս»³։

Այնուհետև երկրաշարժի հետևանքով հիմնահատակ կործանվում է Գետիկի վանքը։ Մխիթար Գոշը թույլ չի ապրիս վանքի շուրջը բնակվող գյուղացիներին ցրվել, իսկ ինքը վանքի միաբանների հետ միասին Քուրդ Արծրունու միջնորդությամբ դիմում է Զաքարե և Իվանե իշխաններին խնդրելով տրամադրել իրենց նոր տեղամաս վանք կառուցելու համար։

Զաքարյան իշխանները սիրով հարգում են այդ խնդիրը և այդ նպատակի համար հատկացնում են Տանձուտայ ձորը։

Հավանաբար հենց այս ժամանակից Զաքարեն Մխիթար Գոշին դարձնում է իրեն խոստովանահայր և սկսվում է նրանց բարեկամությունը։ Համաձայն Գանձակեցու և Աստվածածին եկեղեցու արձանագրության (№ 1) վանքի տաճարի կառուցումը սկսվում է 1191 թ. և ավարտվում է հինգ տարի հետո։

«...եւ կատարի յամս Ե ի խանգար զատկին Յունաց» (արձ. № 1)։

Հիշատակված «խանգար զատկիլ» (ծաղապտիկ) տեղի է ունեցել 1197 թ., երբ լուսավորչական եկեղեցու զատկի տոնը մեկ շաբաթ ետ է ընկել քաղկեդոնականից։ Այս կապակցությամբ

¹ Եվրոպական, ռուսական և հայկական գիտնականների կողմից բազմիցս ուսումնասիրված է Մ. Գոշի Դատաստանադիրքը և ընդհանրապես հայ իրավունքի պատմությունը ուսումնասիրողների և ուսումնասիրությունների մանրամասն բիրիթորաֆիան ունի իմ. Սամուելյանը՝ «Հայ իրավունքի պատմությունը» իր աշխատության առաջին հատորում։

² Պեա, Մատ. ձեռ. № 2606,

³ Նույնը, էջ 233 ա.

մեծ վիճաբանություններ են տեղի ունեցել քաղկեդոնականների և լուսավորչականների միջև՝ Կ. Պոլսում, Կիլիկիայում¹ և Վրաստանում:

Թիֆլիսում տեղի է ունեցել նույնիսկ ընդհարում:² Վիճաբանությունը ստիպված են լինում խառնվել նաև քաղաքական իշխանությունները: Մասնակցել են վեճին նաև ժամանակի նշանավոր անձնավորությունները: Այս կապակցությամբ է գրված Մխիթար Գոշի «Թուղթը»:³ Սա հավանաբար Գանձակեցու հիշատակած «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ շօրավարին Զաքարէին և Կղար իւրոյ»⁴ աշխատությունն է:

Պետ. Մատ. № 8147 ձեռագ. Մխիթար Գոշի Վարքի համաձայն Աստվածածին եկեղեցու շինություն ավարտումից հետո (որը այստեղ զրված է 1196 թվին), Մխիթարը ճանապարհավորում է Երուսաղեմ:⁵

¹ Զամչյան—«Պատմութիւն Հայոց», հ. Գ, էջ 161:

² Այս մասին մանրամասն տես՝ Մ. Меликсет-Бекоев — О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу кривой пачхи», ИЗВИАИ, т. III, 1925.

³ «Թուղթ» Մխիթարայ վարդապետի որ Գոշն կոչվեր՝ Արարատ, 1900—1901 թ.:

⁴ Գանձակեցի, էջ 209:

⁵ Այս ճանապարհորդության կապակցությամբ բերված է հետևյալ ավանդությունը, որը Գոշ գյուղի բնակչության մոտ պահպանված է մինչև հիմա՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 8147:

Մեհնկի և Կեհարվարի ժվ. վարք և պատմութիւն Գոշին Մխիթարայ:

Վարքը կազմված է Գանձակեցու Պատմության հիման վրա և դուրս հալառակը, տվյալ Վարքը հիմա է հանդիսացել Գանձակեցու Պատմության համար: Վարքում ավելացված է մի ավանդություն, որը պահպանված է մինչև հիմա և պատմվում է Գոշականքի շրջակա գյուղերում:

Ս. Աստվածածնի գմբեթանոցի և Եկեղեցին կառուցվելուց հետո Մխիթար Գոշը Ոմեհ (1196 թ.) ցանկանում է մեկնել Երուսաղեմ: Նախքան մեկնումը գնում է վանքը, աղոթում է երկար և իր բազմամարդ միաբանությունը հանձնում է Աստվածածնի խնամքին: Երուսաղեմում մեկ տարի մնալուց հետո վերադառնում է: Ահա՛ն լճի մոտ նրան դիմավորում են նոր Գետիկի միաբանները և հայտնում են, որ նրա բազակայության ժամանակ ստորիկ սով է եղել, որին զոհ է դնացել միաբանության կեսը: Լսելով այդ լուրերն Մխիթարն առանձնանում է և մի ժայռի մեջ աղոթում է Քրիստոսին խնդրելով դատապարտել Տիրամորը, որն անտեսելով իր խնդրը, չի կանխել սոսկալի սովը, որին և զոհ են գնացել բազմաթիվ միաբաններ:

Քրիստոսը լսում է Գոշի աղանչանքը, և երկնային ղորքերով բազմաթիվ մի քանակ է ուղարկում ճապոտիկ (Ձբխու) գյուղի դաշտը և երկու հեռ-

Մխիթար Գոշը մեզ հայտնի է նաև որպէս առակագիր: Նա հայ դրականութեան մեջ առաջին առակագիրներէն է:¹ Նրա առակներէն մեզ հասել են 190: Աղբյուրն է՝ ժողովուրդը, Աստվածաշունչը և որոշ մասեր ստեղծագործել է ինքը:

Առակներն արտացոլում են ժամանակի պոտմական, քաղաքական, տնտեսական միջավայրը: Վառ կերպով դրսևորում են Գոշի հասարակական, քաղաքական, բարոյական հայացքները:

Մխիթար Գոշը վախճանվել է 1213 թվին,² «ալևորեալ և լի աւուրբք»:³

Գանձակեցին մի հատուկ գլխում, որը կոչվում է «Վասն վարդապետին վախճանի մեծին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի» պատմում է նրա կյանքի վերջին տարիների պատմութիւնը: Մահվանից

առկների միջոցով առ ինքն է կանչում Մխիթարին: Քրիստոսի հետ երկար խոսակցութիւն ունենալուց հետո, սրա պահանջով նորից կրկնելով մեղադրանքը Տիրամոր հասցէին, պահանջում է արդար դատաւարան: Քրիստոսը իր պատվիրակի միջոցով աւելի է Մխիթարին փոքրիկ սկուսեղ երեք նշխարքով և փոքրիկ սգալմտակ լի բաժակով: Եվ հրամայելով ըմպել բաժակի պարունակներն, հայտնում է. «ուր և հասանին սոքա (սքրութիւնները) ոչ լինի սով երկրին, այլև ոչ մարեաի, և ոչ թռթռու, և ոչ մուկն, և ոչ մահ և այլն...» Գոշը երեսը դարձնում է՝ բաժակի պարունակութիւնը ըմպելու համար, եւ դառնալով տեսնում է, որ տեսիլները անհայտացել են, փառք է տալիս տիրոջը և վերցնելով սքրութիւնները, գնում է աշակերտների մոտ:

Հասնելով Նոր Գետիկ, ըստից զադանի նա սուրբ նշանը տանում է և գնում շտեմարանում և վերցնելով ողջ միաբանութիւնը մտնում է տաճար աղոթելու: Պատարագից հետո կարգադրում է միաբաններին, որոնք քիչ առաջ նշխարքի ալյուր անգամ չէին կտրոգ դրնել, գնալ շտեմարան և հավաքված ժողովրդի համար կերակուր պատրաստել: Ի դարձանա ըստի, ալյուրի շատութիւնից շտեմարանի դռան անհնար է լինում բացել և ստիպված են լինում տանիքից հանել ալյուրը:

Եվ այսպիսով վերջանում է սոփը և լիութիւն է ընկնում աշխարհում:

¹ Առակների ուսումնասիրութիւններից կարեւորներն են.

ա) H. Mapp—Сборник притч Вардана, т. I.

բ) Մ. Աբեղյան—«Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերութիւնները նրանց մեջ», «Նյութեր հին Հայաստանի պատմութեան», Երևան, 1935 թ:

² Գանձակեցի՝ էջ, 207—209.

³ Վարդան Բարձրեբոցի—«Պատմութիւն տիեզերական», Մոսկով, 1861, էջ 184:

«Եւ զկնի միոյ ամի (1213) կատարեցաւ սուրբ և սքանչելի այրն Աստուծոյ վարդապետն Մխիթար վերակոչեց և այլն Գոշ»:

առաջ նա մի կտակ է գրում, որի համաձայն Ջաքարյան եղբայրների խնամակալությանն է հանձնում վանքը:

Թագված է նոր Գեորգիում: Նրա գերեզմանը սկսած Գանձակեցու ժամանակներից և մինչև հիմա պահպանվում է որպես արքատեղի: Նրա հողին բուժիչ և ամոքիչ հատկություններ են վերագրում:

Նրա անձնավորության շուրջը հյուսվել են ավանդություններ (որոնցից մեկը մեջ է բերված վերևում): Այդպիսի առասպելներից մեկը պահպանված է Գանձակեցու մոտ:

«Գեոգ եղև երբեմն՝ ղի պաշտօնեայք նորա (Մխիթար Գորշի, Հ. Զ.) զային գրաստօք՝ բարձեալ գինի ի պետս վանիցն: Վրացի ոմն, Բասիլիա անուն, եկեալ՝ բռնութեամբ կամէր առնուլ ի նոցանէ ի գինւոյ անտի ղի գործակալ էր նա Իւանէի ի վերայ մայրոյն՝ որ պահէր զտեղի իջեալն ի նորա. և պաշտօնեայքն ասէն ցնա, մի նեղեր զմեղքանղի Գորշին եմք. ղի այսպէս կոչէին զնա. մաշկանուամբ. Իսկ թշուառական անարգեաց զնոսա և զԳորշ հայհոյութեամբ. և իրբն եկն յայն տեղի՝ որ յիշէր զանունն նորա ձաղանօք, անդէն վաղվաղակի համրացաւ, և կապեցաւ լեզու նորա, և այնպէս եկաց զբաղում աւուրս, մինչև հառայնօք խնդրեաց թողութիւն»:¹

Մխիթար Գորշը մեկ թողել է հարուստ գրական ժառանգություն: Այդ մասին Գանձակեցին գրում է.

«Եւ եթող նա յիշատակ և արձան գերեզմանի ղիրս մոսխորնս յօգուտ ուսումնասիրայ համառօտ մարգարէութեանն Երեմիայի գեղեցկաղբը կարգօք. և սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն, թէ որպես պատշաճ իցէ, կամ ձրպիսի կարգօք և գիրք մի ողբք ի վերայ բնութեանս ի դիմաց Աղամայ առ որդիս նորա, և ի դիմաց Եւայի առ զստերս նորա և գիրք մի՝ յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրավարին Ջաքարէի և եղբօր իւրոյ, և այլ թուղթս խրատականս»:²

Մխիթար Գորշի անունով պահպանված են.

1. Դատաստանագիրք Հայոց, հրատարակված է հանդերձ

¹ Գանձակեցի, էջ 208:

² Նույնը:

ծանօթութեամբք և առաջաբանօք Վահան վարդապետ Բաստամ-
հանց, Վաղարշապատ, 1880 թ.:

2. Առակներ, հրատարակված Վենետիկ, 1790 թ., 1842,
1854. աշխարհաբար թարգմանություն՝ Խորեն քահանայի Միր-
զաբեգեանց, 1878, Բաքու:

3. «Կաթողիկոսք և դեպք Աղուանից աշխարհին». սա կցված
է եղել Դատաստանագրքի ձեռագիր օրինակին, հրատարակված է
Ալիշան — «Հայապատում», էջ 384:

4. «Ներքողական ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոս-
րով», Արարատ, 1896, Հավելված, նաև Հայոց նոր վկաները,
հ. Ա, 1825:

5. «Մեկնութիւն համառօտ մարգարէութեան Երեմիայի»,
ձեռագիր, Մատենադարան, հ. 2606:

6. «Թողթ Մխիթարայ վարդապետի որ Գոշն կոչուեր», Արա-
րատ, 1900, 1901 թ.:

7. մի շարք աղոթքներ և քարոզներ:

Մատենադարանում Գոշի անունով կա պահպանված 57 ձե-
ռագիր, որոնցից 4-ը՝ 12-րդ դարի, երեքը՝ 13-րդ դարի, 10-ը՝
14-րդ դարի և այլն:

Այդ ձեռագրերից 25-ը Դատաստանագրքին է:

Մխիթար Գոշն իր դարաշրջանի նշանավոր գործիչներից
մեկն է:

Այսպիսով գալիս ենք այն եղրակացության, որ Մխիթար-
Գոշի գործունեության բնագավառները բազմապիսի են՝ դատաս-
տանագիրք, առակները, աղոթքները, երիտասարդության բարո-
յախոսական ուսուցում: Բացի այդ, նա կարևոր դեր է կատարել
նաև երկրի քաղաքական կյանքում: Նա մեկն է ժամանակի-
այն փոքրածիմ հոգևորականներից, որոնք դիտակցում էին աշ-
խարհիկ իշխանության ուժը, կենտրոնացած իշխանության նշա-
նակութիւնը հայ ժողովրդի համար: Նա աշխատում էր ամեն
կերպ թե՛ խորհուրդներով և թե՛ գործունեությամբ աջակցել այդ
իշխանության զարգացման և ամրապնդման գործին, և օժան-
դակել երկրի միասնության գործին:

Մխիթար Գոշի անվան հետ է կապված նաև նրա հիմնա-
դրած Նոր Գետիկի վանքը, որտեղ նա անց է կացրել իր կյան-
քի վերջին տարիները:

ՆՈՐ ԳԵՏԻԿԻ ՎԱՆՔԸ

Մխիթար Գոշը երկրաշարժից կործանված Գետկավանքի փոխարեն Զաքարյաններից Տանձուտա ձորը ստանալով՝ ձեռնարկում է նոր վանքի կառուցմանը:

Վանքի հիմնադրման ժամանակը հավանաբար 1188 թվականն է, քանզի գեոևս 1187-ին գոյություն ունեւ շին Գետիկի վանքը:¹

Առաջին հերթին կառուցվում է փայտակերտ մի եկեղեցի «յանուն սուրբ Լուսաւորչին Կրիգորի»² Հանդիսավոր օծում են վանքը և հին վանքի հիշատակին անվանում են Նոր Գետիկ: Հանդեսին ներկա է լինում մեծ բազմություն: Կիրակոսն առանձնապէս նշում է Հաղարծնի առաջնորդ Պաշատուր Տարոնացուն:³

Այնուհետև կառուցվում է նաև մի փոքր եկեղեցի՝ սբ. Կարապետ անունով:

«Ծինեցին ի Նորն Գետիկ ևս փոքրագոյն եկեղեցի մի յանուն սուրբ Կարապետին Յովհաննու ի գլուխ վանիցն»:⁴

Այս եկեղեցու հետքերն այժմ չկան, ոմանք այս անվան տակ փորձում են տեսնել զավթին կից գողտրիկ եկեղեցին, որը, ինչպես հետագայում կտեսնենք, բոլորովին այլ է:

Հետևյալ և ամենամեծ շինությունը Նոր Գետիկում Աստվածածնի տաճարն է, որը համաձայն արձանագրության և Գանձակեցու տեղեկության, սկսվել է կառուցվել 1191 թվին:

Աստվածածին եկեղեցու արևելյան պատի հյուսիսային խորանի ձախատի արձանագրությունը.

¹ Համաձայն Պետ. Մատենադարանի ձեռ. Ձ 2606 հիշատակարանի:

² Գանձակեցի, էջ 199:

³ Գանձակեցին իր գրքի 199 էջում Տարոնացու մասին գրում է.

«... այր սուրբ և առաքինի, և գիտութեամբ հոգակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւս ... Սա եբեր զխազն ի կողմանս յարեկից զանմարմին եղանակն ի մարմին ամել, զարդարեալսն յիմաստնոց, որ ցայն ժամանակս և էր սփռեալ ընդ աշխարհս: Պաշատուր Տարոնացու մի շարք շարականներից նշանավորն է «Պորհուրդ խորհին» շարականը, Հաղարծինի վանքը հատկապէս Տարոնացու օրոք մեծ հռչակ է ստանում:

⁴ Գանձակեցի, էջ 200:

1. Ի Ո՞՞(640=1191) զկնի Դ ամաց առնլո
զԵրուսաղեմ Սալահադինին
2. սկսեալ եկեղեցիս Սուրբս Ի Նորո Գետիկ եւ
կատարի
3. յամս Ե Ի խանգար զատկին յունաց ձեռամբ
4. վարդապետին Մխիթարա Ի հայրութեան Վար-
դանա ձեռնառութեամբ բարեպ-
5. աշտ իշխանի Վախտանգա եւ նորին զուգակցի
Աբաղուի
6. աթուռի եւ նորին եղբարցն Սմայատա Վասակա
Քոյ-
7. զհա Գրիգոր[ոգր]իսի ե(ւ) նոցին զավակացն
լիցի նոցա պա-
8. տարագ յեկեղեցիս Ի տաւնի Աստուածածնին
յ Գ ասու-
9. րսն բայց զ Ա. Հասան ա հաւր Վախտանգա
եւ զ Ա. մաւ-
10. ր նոցին Մամին եւ Բ հաւր Արղուխաթունի
11. Քրդին բարեպաշտին անխափան, զտէր
12. Գրիգորէս յիշեցէք Ի Քրիստոս (արձ. № 1):

Այս մասին Գանձակեցին գրում է.


«Եւ ապա սկսան հիմնարկել մեծափառ եկեղեցւոյն
կոփածոյ վիմօք և զեղեցկաշէն արուեստիւ գմբեթայարկ,
երկնանման, սխրալի տեսողաց, սկսեալ Ի Ո՞՞ թուակա-
նին Հայոց զկնի չորս ամաց առնլոյ զԵրուսաղեմ Սա-
լահատնին, և կատարի յամս հինգ Ի խանկար զատկին
Յունաց»¹

Ինչպէս դժվար չէ նկատել, Գանձակեցին կրկնում է արձա-
նագրության բառերը, որը և փաստորեն զրկած է տեղեկու-
թյան հիմքում:

¹ Գանձակեցի, 200:

Այսպիսով եկեղեցու շինարարությունը տևել է 5 տարի և ավարտվել է «ի խանգարդատկին յունաց», որը տեղի է ունեցել 1197 թվին:¹

Սևանի «Հայսմավուրք»-ի² մեջ ղեկաված Մխիթար Գոշր վարքում եկեղեցու ավարտման թիվը դրված է 1196 թ.: Հավանական է, որ շինարարությունը ավսովել է 1191 թվի վերջին և ավարտվել 1196 թվի վերջին, իսկ նրա օծման հանդեսը տեղի է ունեցել 1197 թ. շփոթած զատկի տոնակատարության օրը:



Նկ. 2. Վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից

Աստվածածնի տաճարը աննշան խախտումներով կանգուն է ֆնացել մինչև հիմա: Սա մի քառանկյունի հատակագիծ ունեցող եկեղեցի է, կառուցված սրբատաշ քարերից: Չորս որմնասյուներին հենվող կամարների վրա բարձրացող գմբեթով: Արևելյան պատի աջ և ձախ կողմում տեղավորված են երկհարկ խորանները: Վերին հարկի խորանների մուտքը բեմի վրայից է: Ունի երկու դուռ՝ հյուսիսից և արևմուտքից: Զարդարանք-

¹ Л. Меликсет-Бекоев—«О междоусобице в Тифлисе в 1197 г. по поводу кривой пасхи», ИзКИАИ, т. III, 1925.

² Գևա, Մատեն, ձեռագիր № 8147:

ները քիչ են և անշուք: Հոյակապ է միայն դրսից դմբեթի վրայի շուրջանակի հյուսված քավոր դուռին:

Տաճարի երկարությունն է 14,82 մետր, լայնությունը 3,78: Պատերը ներսից պատված են բազմաթիվ արձանագրութիւններով:

Այսպիսի շինքի կառուցումը 5 տարում հնարավոր էր նյութական մեծ միջոցների գոյութիւն դնալու:

Համաձայն արձանագրութեան, տաճարի շինարարութեանն օգնել են ժամանակի անվանի և փողատեր իշխանները, Վախթանգ Հաթերքցին, և նրա եղբայրները՝ Սմբատ, Գրիգոր, Վասակ, Խոյզան, Գրիգորիս: Գանձակեցին սրանց թվում ավելացնում է նաև Վախթանգի կնոջ Արզուխաթունի եղբայրներին, այսինքն Գոշի լավ բարեկամ Բուրդ իշխանի որդիներին՝ Դավթին և Սաղունին:

«...ձեռնտութեամբ Վախթանկայ Խաչենեցոյ՝ տեառն Հաթերքոյ, և եղբարց իւրոց՝ Գրիգորոյ և Գրիգորիսի և Խոյզանայ և Վասակայ, և այլոց իշխանաց բարեպաշտաց որդւոց Բրթին Դաւթի և Սաղունին»:¹

Ինչպես տեսնում ենք, տաճարի շինութեանը օգնում են Մ. Գոշի հին բարեկամները՝ Վախթանգ Հաթերքցին (Բուրդի փեսան), որի տիրապետութեան տակ եղած Դասնո անապատում Մխիթարը գրել էր իր Դատաստանադիրքը, նրա եղբայրները և Բուրդ Արծրունու որդիները (Բուրդն այդ ժամանակ վախճանված էր):

Այնուհետև Գանձակեցին գրում է, որ Վախթանգի կինը, Արզուխաթունը՝ իր գուստրների հետ վանքի համար գործում են մի գեղեցիկ վարագույր «գարձանալի տեսողաց», այժի փափուկ մազից գունավոր և սքանչելի աշխատութեամբ:

Ինչպես և ընդունված էր, կատարվում է տաճարի հանդիսավոր օծումը, որին ներկա են լինում մեծ թվով հյուրեր, որոնց թվում առանձնապես նշվում է Հաղբատի Հովհաննես եպիսկոպոսը:

Տաճարի կառուցումից հետո Մխիթար Գոշը ձեռնարկում է եկեղեցու կից գավթի շինարարութեանը: Այս գործում նրան օգնում են Զաքարե և Իվանե իշխանները:

«Շինեցաւ և գաւիթ եկեղեցւոյն գեղազարդ և կոփա-

¹ Գանձակեցի, 203:

ծոյ վիժօք: Յոլով ձեռնատու եղեն միժ զօրավարքն Ձա-
քարէ և եղբայրն իւր Իւանէն:¹

Գավիթը արտաքուստ բավական անշուք շենք է, ներսից հակառակը՝ հոյակապ, չորս սյուների և օրմնասյուների վրա բարձ-
րանում է կամարակապ տանիքը, որի կենտրոնում գետեղված է
լուսամուտը:

Գավթի երկարութիւնն է 12,41 մետր, լայնութիւնը
13,55: Կառուցված է տաճարին կից, բայց բոլորովին անկախ
նրանից: Ունի երկու մուտք, հյուսիսից և արևմուտքից սալա-
հատակ է: Արևելյան որմի մեջ երկու կողմից կան երկհարկանի
խորաններ. գավթի հատակը տաճարի հատակից ալելի ցածր է:
Արևելյան որմին կից է ցածր սրբատաշ քարերից շինած պատ-
վանդան, որի վրա կան փոքրիկ սյունազարդ կամարներ: Ունի
երեք լուսամուտ, մեկը հարավային պատի վրա, երկուսը
արևմտյան:

Այս գավիթը Ն. Տոկարսկին համարում է այդ տիպի կա-
ռուցութիւնների միջ հնագույն ներկայացուցիչներից մեկը:²

Այնուհետև Մխիթարը վանքի գիմացի սարալանջի վրա
կառուցում է իրեն համար բնակարան: Նրա մոտ շինում
է մի փոքր վայտակերտ մատուռ՝ «Յանուն սր. Հոգու», և ուր
1213 թ., համաձայն իր կտակի, թաղվում է Մխիթար Գոշը:

Մխ. Գոշի բնակարանի հետքերն անգամ այժմ գոյութիւն
չունեն: Սբ. Հոգու մատուռից էլ մնացիլ են շատ չնչին հետքեր:
Փայտակերտ մատուռը ժամանակի ընթացքում կործանվել է:
Մեր ժամանակներում փորձել են վերականգնել այն հասարակ
քարերից կոպիտ շարվածքի միջոցով (հավանաբար ուխտավոր-
ների կողմից):

1208 թվին Աստվածածին եկեղեցու հարավային պատին
կից կառուցվում են երկու փոքրիկ մատուռներ սրբատաշ քա-
րերով:

«Շինեցին և այլ մատրուհս յանուն սրբոց առաքե-
լոցն և սրբոյն Հռիփսիմեայ»:³

Հ. Սպենդիարյանն իր «Մխիթար Գոշի վանքը»⁴ հոդվածում,

¹ Գաւթակեցի, 204.

² Н. Токаровский—Архитектура древней Армении, стр. 250.

³ Գաւթակեցի, 204.

⁴ «Մշակ», 1911 թ.

այս մատուռները անվանում է գրադարան, սակայն դրանք այն-
քան փոքր են, որ գրադարան լինել չէին կարող: Մատուռներից
մեկի մուտքի՝ ճակատի արձանագրությունը հայտնի է դարձ-
նում, որ դրանցից մեկը Գանձակեցու հիշատակած ս. Հռիփսի-
մյանց մատուռն է, կողքին էլ հավանաբար՝ Առաքելոցը:

«Սուրբ Հռիփսիմէ ի թւին ՌԾԵ (657—1208)

Շինեցաք զեկեղեցիս . . . (արձ. № 15):

Մ. Վ. Բարխուդարյանը ս. Հռիփսիմյանց մատուռը համարում է՝
վանքի դիմացի լանջի վրա գտնվող մատուռը,¹ մինչդեռ, ինչպես
հետո կտեսնենք, նա ունի 1251 թիվը կրող շինարարական ար-
ձանագրություն. նրա մասին հիշատակություն ունի նաև Գան-
ձակեցին:

Ահա այս շենքերն են, որոնք կառուցվել են Գոշի կենդա-
նության ժամանակ:

Այստեղ մեծ գիտնականը և ուսուցիչը հիմնում է իր վանք-
դպրոցը, որը կարճ ժամանակամիջոցում դառնում է հյուսիսային-
Հայաստանի հոգևոր և մտավոր կարևոր կենտրոններից մեկը:

Մխիթար Գոշի մահվանից հետո չի դադարում Նոր Գետիկի
ոչ մտավոր և ոչ էլ շինարարական կյանքը: Մխիթարի աշա-
կերտները մինչև 13-րդ դարի վերջը պահում են վանքի
հոգակը: Գանձակեցին իր Պատմության «Վասն որք յետ նո-
րա կալան առաջնորդութիւն»² գլխում խոսում է Գոշի մահվա-
նից հետո Նոր Գետիկի կյանքի մասին: Նա հատուկ գովա-
սանքով է խոսում Մարտիրոս վանահոր վրա, որին, ինչպես
տեսանք, վանահայր էր նշանակել Մխ. Գոշը դեռ իր կենդա-
նության ժամանակ: Մարտիրոսը իր այդ պաշտոնում ֆիացել է
40 տարի (1212—1252 թ.թ.):

Գանձակեցին հատկապես շինտում է Մարտիրոս վարդա-
պետի Նոր Գետիկում կատարած շինարարական աշխատանքը և
անվանում է նրան «այր շինարար»:

Թվարկելով նրա կատարած գործերը Գանձակեցին, գրում է.

«Շինեաց և այլ ժամատուն անտաշ վիմօք մածու-
ցեալ կրով հաստատահոյս որմօք, փայտակերտ վերնա-

¹ Արցախ: Նույնը կրկնվում է նաև Դիլիջանի շրջանի ուղեցույց ալ-
բոմում, էջ 18:

² Գանձակեցի, էջ 209:

յարկօք, որ յետ ժամանակաց փլաւ վերնայարկն: Շինեաց
և՛ գրատուն մի գեղեցկաշէն յարկօք...»¹

Սկսենք վերջինից: Գրատունը ամբողջութեամբ պահպան-
ված է: Գտնվում է Աստվածածին եկեղեցու հյուսիսային կող-
մում, միացված է զավթին՝ հետագայում կառուցված կամարա-
կապ միջանցքով: Արտաքինապես կառուցված է հսկայական ան-
տաշ քարերից: Ներսից՝ հղկած չորս կամարների և 8 կիսասյու-
ների վրա հենված է կոնաձև վերևը երդիկով տանիքը, հոյա-
կապ և գեղեցիկ են մշակված կամարները: Պատերի մեջ շինված
են պատուհաններ, հավանաբար սրանք պահարաններ են գրքերի
համար: Գրատան շենքի կառուցվածքը նույնն է հայկական
գյուղական տան հաղարաշին կառուցվածքի հետ, տարբեր է
միայն նյութը. փայտը տվյալ դեպքում փոխարինված է քարով:

Գրատան շենքը ենթարկվել է հետագայում մի քանի ան-
գամ փոփոխությունների, բոլորովին կորցնելով իր նախկին
տեսքը և նշանակությունը: Գրականություն մեջ երբեմն անվան-
վում է տապանատուն,² մառանատուն:³

Իրականում գրատունը ժամանակի ընթացքում վեր է ած-
վել եռհարկանի զանգակատան: Այդ մասին մենք իմանում ենք
նույն այդ շենքի 2-րդ, հարկի արձանագրությունից (տես-
արձ. 17):

Կամաւ ամենակալ

ին Աստուծոյ ի թվին հայոց ՉԽ (740 — 1291)

• • • • • մեք Ռեղը

արքս Դասապետ վարդապետ եւ Կարապետ եղաք

հիմն ի վերա եղեալ հիմանս

եւ շինեցաք զանկակատուն եւ եկեղեցի յանուն

սբ. հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի...

Զանգակատան վերակառուցումն ունեցել է երկու էտապ,
որի պարզ պատկերը մեզ տալիս է ճարտարապետական մանրա-
զնին հետազոտությունը: Առաջին էտապը, երբ մեզ համար ան-

¹ Նույնը:

² Մ. Վ. Բարխուդարյանց—Արցախ, Թումյան—Դիլիջանի շրջանի ուղեցույց.
ալբոմ, 17:

³ Էփրիկյան—Բնաշխ. բառարան:

հայտ մարդկանց միջոցով, գրատան: Լոնաձև դմբեթի գազաթի վրա շինում են հորիզոնական հատակ և լարձրացնում են պատերի երկու շար փոքր որմնասյուներով, որոնք հետագա վերաշինության ժամանակ այլևս չեն շարունակվել և մնացել են որպես հիշատակ անավարտ գործին:

Գրատան գմբեթի և հետագայում շինված երկրորդ հարկի հատակի միջև առաջացած դատարկ տարածությունը գրականության մեջ երբեմն անվանում են գալտնի հարկ կամ պահեստ: Հավանական է, որ այդ հարմար միջնահարկը օգտագործվել է որպես պահեստ թշնամու հարձակումների ժամանակ զբաղմունքները և վանքի թանկարժեք իրերը պահելու համար, և ոչ թե հատուկ կառուցված է այդ նպատակի համար: Խսկապես նա մի շատ հարմար պահեստ էր, սակայն առաջացած վերականգնման ժամանակ ճարտարապետական անհրաժեշտությունից:

Զանգակատունը իրականում կազմում է երրորդ հարկը (այժմ քանդված է), իսկ երկրորդ հարկը ինչպես պարզվում է № 17 արձանագրությունից, «Յանուն Միքայել և Գարբիէլ հրեշտակապետաց» երկու փոքր բեմեր ունեցող եկեղեցի է:

Դառնանք Գանձակեցու հիշատակած Մարտիրոս վանահոր կառուցած «մի այլ ժամատանը»:

Հիշյալ գրատան արևմտյան կողմում կա նույնպիսի անտաշ քարերից կառուցված մի քառանկյունի շենք, որից պահպանված են միայն շենքի պատերի ներքին մասերը:

Ամենայն հավանականությամբ այս ավերակը ոչ այլ ինչ է, եթե ոչ մարտիրոսաշեն ժամատունը, որի վերնահարկը, ինչպես տեսանք վերը բերված Գանձակեցու տեղեկությունից, փայտակերտ էր և կործանվել էր հավանաբար դեռևս մոնղոլների առաջին արշավանքի ժամանակ Նոր Գետիկում բռնկված հրդեհից:

Համաձայն գոյություն ունեցող տրագիցիայի, ժամատուն կոչված շենքը, որը նաև գավթ է կոչվում, պետք է կից լիներ եկեղեցուն, և ոչ միայն կից, այլ նաև հաղորդակից: Սակայն ինչպես մենք տեսնում ենք, Նոր Գետիկի այս ժամատունը կից է ոչ թե եկեղեցուն, այլ գրատանը: Ոմանք այս ավերակը համարում են սեղանատան² մնացորդներ, ոմանք ընթերցասրահ՝

1 Մ. Վ. Բարխուդարյանց—Արցախ, Էփրիկյան—Բնաշխարհիկ բառարան:

2 Նույնը, և Ուղեցույց—ալբոմ:

գրատան կից¹ Առաջին ենթադրութիւնը չունի ոչ մի հիմք, իսկ երկրորդը չափազանց սահմանափակ է միջնադարյան վանքի պայմանների համար:

Այստեղ աչքի է զարնում մի դուռ տեղական հանգամանք, որն առիթ է տալիս ավելի խոր մտածելու տվյալ ժամատան և ընդհանրապես ժամատների նշանակութեան մասին: Այդ հանգամանքը շենքի շինարարութեան արվեստն է, որը շատ նման է գրատան շինարարական արվեստին և բոլորովին տարբեր վանքի եղեղեցիների և անգամ մատուռների արվեստից: Այսինքն կառուցված է հակառակն չհղկված քարերից:

Գրատունն իր բնույթով մի աշխարհիկ նշանակութիւն ունեցող շինք է վանքում: Այստեղից նկատաւ միտք էր ծագում արդյոք նույնպիսի աշխարհիկ բնույթի շենք չէ՞ր նրա արևմտյան կողմում գտնվող նույն շինարարական արվեստով կառուցված շենքը, որին Գանձակեցին ժամատուն է անվանում:

Ավելորդ չէ նաև այստեղ ավելացնել Գանձակեցու այն նախադասութիւնը², որը հաջորդում է գրատան և ժամատան կառուցման վերաբերյալ նախադասութեանը՝

«Եւ բաղում եղբարք ժողովեցան վանն հոգեականուն տեղւոյն, և բաղմաց եղև տեղի մանդեան և ուսման եւ մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս»:²

Արդյոք այս խոսքերը չէ՞ն վերաբերում հատկապես այն երկու շենքերին, որտեղ և տեղի էր ունենում ուսուցման պրոցեսը: Գրատան այդ նշանակութիւնը ապացուցելու կարիք չունի, կասկած է հարուցում ժամատունը, որը մինք սովոր ենք պատկերացնել որպես մի սրահ կից իկեղեցուն, ուր մարդիկ հավաքվում էին ժամատացութեան ժամանակ, որտեղ թաղվում էին նշանավոր իշխանները, հոգևորականները և այլն:

Այժմ անհրաժեշտ է մի փոքր շեղվել բուն նյութից և տեսնել թե ինչ է նշանակում ժամատունը և ինչ էր այն իրենից ներկայացնում հնադրային ժամանակներից սկսած:

«Ժամատուն—տուն աւընթեր եկելիցւոյ և սեփական»
այնմ»։ Հայկադայան բառարան:

¹ Н. Токаревский, указ. соч., стр. 248.

² Գանձակեցի, էջ 209:

Մալխասյանի Բացատրական բառարանում գրված է հետևյալը.

Ժամատուն—եկեղեցու մոտ շինված և նրան պատկանող տուն: Պատարագիչ քահանան ժամատանն էր գիշերում: Էջմիածնի նվիրակը եկավ ժամատանը իջևանեց:

Հին նշանակությամբ—այն տունը, որտեղ ննջեցյալի հիշատակին հոգու հաց են բաժանում:—Քաջքերի ժամատուն դարձնել, այսինքն դեերի բնակարան դարձնել:

Այսպիսով, նշանակում է ժամատունը եկեղեցու մոտ (ոչ անպայման կից) կառուցված, նրան պատկանող տուն է, որտեղ գիշերում է պատարագիչ քահանան, իջևանում է նվիրակը, բնակարան:

Ժամատան բառի վերոհիշյալ նշանակությամբ, այսինքն որպես մի շենք եկեղեցու հետ կապված ամենահին նշանակությամբ հանդիպում է Հովհաննէս Դրասխանակերտցու մոտ Եզր կաթողիկոսի կողմից Գայանեի վանքը վերաշինելու կապակցությամբ.

«Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ, քակեալ զայն, ևս ընդարձակադոյն և պայծառադոյն զնա շինեաց, կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին: Այս եղև սկիզբն ժամատուն շինելոյ մինչև ցայս ոչ երևելք ի Հայս»:¹

Թ. Թորամանյանը այս խնդրի ուսումնասիրությանը ունի նվիրած մի չափազանց հետաքրքրական հոդված «Դավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիներուն մեջ»² խորագրով: Այդ հոդվածում հեղինակը ամենայն մանրամասնությամբ և բարեխղճությամբ ճարտարապետական առանձնահատկությունների, հարևան ժողովուրդների սովորությունների և եկեղեցական կանոնների ուսումնասիրության հիման վրա աշխատում է պարզաբանել այդ շենքերի, այսինքն ժամատաների և դավիթների դերը

¹ Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1843, էջ 56:

² Թ. Թորամանյան—«Եկեղեցի հայկական ճարտարապետության պատմության», էջ 147:

և նշանակութիւնը: Նրան հաջողվում է պարզել, որ նախքան 7-րդ դարը պատարագիչ քահանաներին թույլատրվում էր դիշերել եկեղեցու ներսում, որը սակայն 7-րդ դարում արգելվում է և համաձայն Դրասխանակերտցու վերոնիշյալ վկայութեան այս նպատակով սկսում են կառուցել առանձին շինքեր, որոնք կոչվում են ժամատուն:

«Ժամատուն 7-րդ դարու քահանաների բնակարան կնշանակեր, եկեղեցուց դուրս ազատ շինված... Փոքր ասիական հայաբնակ դավառներումն մեջ տակավին կշարունակվի այս շինութեան սովորութիւնը և ժամատուն, խուց, մասնատուն, մատաղատուն և այլ անուններ կտրվեն անորը»:¹

Այնուհետև զարգացնելով իր այս հոգւածը, նրա մեջ առնելով գավիթների ծագման և զարգացման պատմութիւնը, Թորամանյանն այնուամենայնիւ անավարտ է թողնում այս խնդրի լուծումը և դեռ ավելին, հարց է առաջ քաշում պարզաբանելու ժամատուն և գավիթ տերմինների ակնհայտ շփոթութեան պատճառը և ժամանակը:

«Այժմ կմնա գիտենալ, թե ինչու համար հայոց եկեղեցիներուն կից սրահներուն ժամանատուն և գավիթ իրարմէ տարբեր անուններ անխտիր գործածեր են և երբ է սկսել այդ անխտիր գործածութիւնը»:²

Այս խնդրի պարզաբանման համար հետևենք այդ շինքերի զարգացման պրոցեսին: Դրա համար անհրաժեշտ է վերհիշել պատմական այն միջավայրը, որտեղ պետք է իր հետագա զարգացումն ապրեին վանքի ներսում նոր ծագած ժամատները:

7-րդ դարի կեսից սկսում են արաբական արշավանքները: Հրի և սրի է ենթարկվում ժողովուրդը և նրա բոլոր տեսակի իրավունքները: Մահից և գերութիւնից ազատված ժողովուրդը ենթարկվում է օտար տիրակալութեան դաժան ճնշմանը: Այդ արհաւիրքներից այլ և այլ քաղաքական պատճառներով որոշ չափով զերծ էր մնացել եկեղեցին: Օգտվելով իր արտոնյալ վիճակից, նա գնալով էլ ավելի էր իրեն ենթարկում ժողովրդի քարոյական և հոգևոր կուլտուրան: Հոգևորականութեան ձեռքին

¹ Նույնը, էջ 155:

² Նույնը, էջ 147:

է կուտակվում դատը, դատաստանը, ուսուցումը: Նա էր հանգիստանում միջնորդ ժողովրդի և օտար տիրակալութեան միջև: Այս մեծ և ընդարձակ պարտականութիւնները կատարելու համար հողերականութեանն անհրաժեշտ էր ունենալ նաև որոշ հարմարութիւններ, այսինքն ուսուցման, դատական պրոցեսի, զանազան հավաքների և ժողովների համար անհրաժեշտ էր ունենալ եկեղեցուց բացի նաև մի այլ շէնք: Ահա այստեղ է, որ ստեղծվում են պայմաններ ժամատան հետագա զարգացման համար:

7-րդ դարի ժամատան, այսինքն վանքի միակ աշխարհիկ շէնքի ֆունկցիան գնալով ընդարձակվում է. նա զաւարում է միայն բնակարան լինելուց և վեր է անցնում թե լսարանի, թե դատարանի—ատյանի, թե ժողովարանի և այլն: Շուտով ժամատները դառնում են անհրաժեշտութիւն քիչ թե շատ նշանակալից վանքի կոմպլեքսում: Այս շէնքերը կրկնում են հայկական գյուղական հազարաշեն տան ճարտարապետութիւնը, այսինքն ունեն չորս սյուների կամ ութ որմնասյուների վրա բարձրացող կոնաձև տանիք, որի կենտրոնում տեղավորվում են լուսամուտ—երդիկը: Այս շէնքերի վերնահարկը վաղ շրջանում կառուցվում էր փայտից (ինչպես նաև գյուղական տունը):

Ինչպես վերը նշեցինք, համաձայն որոշ տրագիցիայի, որն իր սկիզբն է առնում միջնադարից, եկեղեցու կից շէնքերը կոչվում են և ժամատուն և գավիթ: Մենք քննեցինք առաջին անվան ծագումը մինչև որոշ ժամանակաշրջան: Այժմ քննենք նաև գավիթ անվան նշանակութիւնը, ծագումը և զարգացումը: Եվ նոր փորձենք բացատրել այդ երկու տերմինների շփոթութեան պատճառները:

Գավիթ—բակ տան և ապարանից և տաճարին և այլն.

գավիթ տանն արքունի... (Հայկազյան բառարան):

Թե գրաբարում և թե աշխարհաբարում գավիթ բառը գործ է անվում միևնույն նշանակութեամբ, այսինքն նախասրահ, որն անհրաժեշտորեն կառուցվում է յուրաքանչյուր տան մուտքի առաջ, չինքն դա շինականի տուն, թե արքայական պալատ:

Այսպիսի նախասրահները կառուցվում էին դեռևս հնագույն ժամանակներից նաև եկեղեցու մուտքի մոտ, երբեմն միայն արևմտյան մուտքի, երբեմն շուրջանակի (Օձուն): Սրանք բաց կողմերով, կամարակապ սյուներից կազմված սրահներ էին: Այս տիպի գավիթները չափազանց տարածված են քրիստոնեական

եկեղեցիները շինարարության մեջ և կոչվում են Nartex, притвор և այլն:

Թ. Թորամանյանը ապացուցում է, որ հայկական եկեղեցիների մեծագույն մասը մինչև 10-րդ դարը ունեցել է նման դավիթ:

11-րդ դարից սկսած և հատկապես 12—13-րդ դարերում հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ մենք հանդիպում ենք այնպիսի փոփոխության, երբ վերանում են նախկին փոքր քաղց դավիթները և սկսում են կառուցվել նոր մեծ ընդարձակ սյունազարդ սրահներ, որոնք և կոչվում են երկու տարբեր անուններով՝ ժամատուն և դավիթ: Այս շինքերը կից լինելով եկեղեցուն, համարյա բոլոր դեպքերում, որպես կանոն կառուցվում էին եկեղեցու շինությունից հետո, երբեմն անմիջապես, երբեմն էլ տասնյակ տարիներ անց: Սրանք իրենց ճարտարապետական ոճով շատ նման են պողոտական հազարաշեն շենքին և ժամատանը, քայց արդեն կառուցված են շատ լավ հղկված և մշակված քարից և գեղեցիկ քանդակազարդված են, հատկապես սյուները և կոնաձև առաստաղը:

Ինչ էր այս երևույթի պատճառը:

Որոնք էին այն հանգամանքները, որոնք առաջացրին այս նոր երևույթը:

Ստիպված ենք նորից մի փոքր ակնարկ դնել պատմական ժամանակաշրջանի և քաղաքական դեպքերի վրա:

11—12-րդ դարերում Հայաստանում նորից ստեղծվել էր քաղաքական և սոցիալական այնպիսի դրություն, երբ քաղաքական ուժեղ իշխանության քաղաքացւթյան պայմաններում նորից հզորացրել էր եկեղեցու իշխանությունը: Սակայն փոփոխվել էր և այն էլ շատ արագ նաև ժողովրդի սոցիալական վիճակը և մտավոր աշխարհը: Կյանքի նոր պայմաններն էլ ավելի էին առաջ քաշում աշխարհիկ բնույթի պահանջներ: Կարիք է առաջանում բնակչության ավելի հաճախակի և բազմամարդ հավաքների. անհրաժեշտություն է դադարում աշխարհիկ օրենսդրության և այլն: Պարզ է, որ բնակչության բոլոր պահանջները չեն, որ հարգվում և իրագործվում էր տիրող իշխանության կողմից: Բնական է, որ այդ պատճառով ժողովրդի մաս առաջանում են զժգոնություններ, որոնք և ուղղված են լինում եկեղեցու, որպես տմեկնաձև Ֆեոդալի և նրա հովանավոր աստծու դեմ (աղանդալորական շարժումներ): Այս բոլոր հավաքները, ժողով-

ները ընտկան է, որ տեղի էին ունենում գլխավորապես եկեղեցու ներսում և այն էլ նրա կամ ժամատունը կամ դավթում: Գավթին իր փոքրությամբ չէր կարող բավարարել ժողովրդի այդ աճող պահանջներին: Ժամատունը նույնպես չէր բավարարում, սակայն այս անգամ ոչ թե ժողովրդին, այլ հոգևորականությանը և այն էլ ոչ այնքան իր տարածությամբ, որքան զիրքով: քանզի տվյալ պայմաններում հոգևորականությանն անհրաժեշտ էր ժողովրդին էլ ավելի պահել ասծո դատաստանի վախի տակ, այնինչ ժամատունը կառուցվում էր առանձին և չէր գտնվում աստծո «անմիջական ազդեցության տակ»: Օգտագործել այդ նպատակով եկեղեցին հնարավոր էր երկու պատճառով՝ որպես աստծո տուն այն չէր կարելի ապականել ոչ հոգևոր գործերով, և երկրորդ նա այլևս չէր բավարարում իր ծավալով նույնիսկ եկեղեցական սրարողություններին համար:¹

Ահա այս բոլոր հանգամանքները հոգևավականությանը ստիպում են ժամատունը՝ վաճառել միակ աշխարհիկ շենքը, կցել եկեղեցուն: Այսպիսով միևնույն ժամանակ լուծելով երկու խնդիր, առաջինը, որ այս միակ աշխարհիկ շենքը ևս առնել հոգևոր վերահսկողության տակ և երկրորդ ընդարձակել եկեղեցու տարածությունը ազդեցության համար: Եվ որովհետև նա կառուցվում է նախկին դավթի փոխարեն և ինքը ևս հանդիսանում է դավթի, ուստի կոչվում է այդ նոր շենքի երկու բաղադրիչ մասերի անուններով՝ ժամատուն և դավթի: Ժամանակի ընթացքում պետք էր որ վերանորոգվեր ժամատուն անունը և մնար միայն դավթի: Եվ այդպես էլ եղել է, բայց դժբախտաբար ոչ բոլոր աղբյուրներում: Այսպես օրինակ Գանձակեցին երբեք չի շփոթում այն դեպքում, երբ Ստեփան Օրբելյանը շփոթում է,

Այն մասին որ այս նոր ընդարձակ դավթի ռենցել է նաև աշխարհիկ բնույթի, մենք ունենք բազմաթիվ փաստեր պատմիչների մոտ, իսկ ամենից փայլունը այն արձանագրություններն են, որոնք փորագրվում էին հատկապես դավթիների պատերի վրա: Այսպես օրինակ Հոռոմոսի վաճառի դավթի (որ ամենահին օրինակն է) պատին փորագրված է բազմաթիվ արձանագրություններ հարկային և առևտրական արտոնությունների և

¹ Н. Марр—Ани столица древней Армении. Историко-археологический набросок „Братская помощь“, 1898, 210.

այսինի մասին, սրանց հիման վրա Մառը ենթադրում է, որ գավթում ժողովուրդը հավաքվում էր ոչ միայն եկեղեցական գործերի համար, այլ և հասարակական և քաղաքական,¹ այսինքն գավթին օգտագործվում է այն նպատակով, որի համար նախկինում, մեկ երկու դար առաջ, ծառայում էր ժամատունը:

Այսպիսով ժամատան հետագա զարգացումը 12—13-րդ դարերի հոյակապ քարակերտ գավթներն են:

Սակայն բոլոր դեպքերում չէր, որ վերանում էին ժամատները և իրենց տեղը զիջում գավթներին: Որոշ դեպքերում նրանք շարունակում են կառուցվել, անդամ 13-րդ դարում և դա հատկապես մեծ վանք դպրոցներում, որտեղ միայն գավթի թիվը և ճեմարանը չէին կարող բավարարել նրանց պահանջներին: Այսպիսի փաստեր մենք ունենք Հաղրատում՝ Համազասպի տունը, Գեղարզում՝ Ռուսուքանի և Պապջանի կառուցած ժամատունը և վերջապես Նոր Գետիկի մարտիրոսաշեն ժամատունը, որն ավելի հին է եղել, քան նախորդ երկու օրինակները:

Մարտիրոս վանահոր հետևյալ կառուցումը սբ. Գրիգորի հինգ խորան եկեղեցին է, հավանաբար Մխիթար Գոշի կառուցած փայտակերտ եկեղեցու փոխարեն: Խորեզմի Շահ Զալալեգիրի արշավանքները առժամանակ կանգնեցնում են շինարարությունը: Եկեղեցին ավարտվում է 1231 թվին ոմն Գրիգորի և նրա եղբայրների կողմից: Այդ մասին մենք հիշատակություն ենք գտնում մուսթի վերնասյամի արձանագրության մեջ (տես № 12):

Այս Գրիգորի մասին հիշատակում է նաև Գանձակեցին, անվանելով նրան Գրիգոր Կապալեցի: Կիրակոսը նշում է նաև, որ հենց սկզբից և եթ եկեղեցու ծախսերը հոգում էր նույն այդ Կապալեցին: Սակայն Գանձակեցու մոտ կա մի շփոթում: Եկեղեցու ավարտման թիվը նշանակված է 1241 (Ո Ղ), մինչդեռ շատ լավ պահպանված արձանագրության մեջ ՈՁ թիվն է (1231):

Հավանաբար սա Կիրակոս Գանձակեցու ձեռագրի արտագրողների սխալն է՝ Ղ և Ձ գրերի շփոթությունից առաջացած:

Սուրբ Գրիգորի եկեղեցին կառուցված է սրբատաշ քարերից: Հատակագիծը նույնն է, ինչ մայր տաճարինը, բայց ավելի փոքր: Արևելյան կողմում կան երկհարկանի խորաններ: Ունի մեկ մուտք: Դմբեթը եղել է քանդված և վերականգնվել է 1938 թ. Հուլ. Պահպ. Կոմիտեի կողմից: Հարավային պատի վրա

ունի արևի ժամացույց: Մուտքի ձախ կողմի վրա կան խաչքարեր:

Եկեղեցու հրկարությունն է 5,56 մետր, լայնությունը՝ 5,76:

Այս եկեղեցին հետաքրքրական է և մի այլ տեսակետից: Եկեղեցու արտաքին տեսքը ոչ մի կասկած չի հարուցում, որ շենքը կառուցված է մի պլանով և բոլոր մասերը միաժամանակ՝ Մակայն խորանների վրա կան երեք արձանագրություններ (տես № 12, 14, 13), որոնք թվարկում են որոշ անձնավորություններ և նշում են, որ խորանը կառուցված է նրանց միջոցներով:

12. Ծառայն Աստծոյ Գերդ եւ ամուսին իւր Կատայ եւ զավակնն նոցին շինեցին իւրեանց ընչիւք
զխորանս...

13. մեք եղբարքս — — — — —
— — — — — զմեր հո
դույ արդիւնքս յեկեղեցոյ շինութիւնս տուաք — — — — —

14. Ի տաւնի սուրբ խաչին Ա. աւր պատարագ Խաչատուր վարդապետին եւ եղբարց իւրոց եւ ծնողացն զի նոցա ինչիւք շինեցաւ խորանս

Այսպիսով մի շենքի վրա ստացվում է շինարարական չորս արձանագրություն, որոնցից վերջին երեքը խոսում են միայն խորանների կառուցելու մասին:

Այս տարօրինակ երևույթը ուսումնասիրել է Հ. Ա. Օրբելին իր «О двух терминах в надписях Ани»¹ հոդվածում և ավել է սպառիչ պատասխան:

Անիի պարիսպների արձանագրությունների մեջ նույնպես հանդիպում են նման տիպի արձանագրություններ. հեղինակը

¹ Известия Российской Академии Истории материальной культуры том I, Петроград. 1921.

ժողրախացնում է, որ Անիի պարիսպները, անկասկած, շինված են միասնական նախագծով և միևնույն ժամանակ, բայց համաձայն գոյություն ունեցող սովորության, հետագայում առանձին բուրգեր կամ պարսպի առանձին հատվածներ վաճառվում էին մասնավոր անձանց, որից հետո նրանք նախօրոք տեղավորված հատուկ քարի վրա արձանագրում էին իրենց և իրենց մոտիկներին անունները և անգամ գրում, որ այս բուրգը շինված էր իրենց գումարով: Այս և նման դեպքերում, շինել բառը կորցնում է իրեն իսկական նշանակությունը և նշանակում է միայն գնի վճարում: Այս երևույթը շատ մեծ նպաստում է հիկեղեցաշինարարության մեջ:

Ինչպես ցույց է տալիս Հ. Օրբելին Ջուխտակ վանքի օրինակի հիման վրա, հաճախ թվական է ունենում թե հիմնական շինության արձանագրությունը և թե հիկեղեցու որևէ մասը, ավելի հաճախ խորաններից մեկը, բայց այդ դեպքում առաջին արձանագրությունը կրում է ավելի հին թվական, քան թե երկրորդը:

Նույն այս երևույթն է նկատվում Նոր Գետիկի սբ. Գրիգորի հիկեղեցու խորանների երեք արձանագրությունների և Աստվածածնի № 2 արձանագրության մեջ:

Սակայն չպետք է մոռանալ, որ պատահում են նաև դեպքեր, երբ հիկեղեցին կառուցվում է մի խումբ մարդկանց ներդրված միջոցներով, որոնք բոլորն էլ ստանում են իրավունք արձանագրություններում իրենց վերագրել կառուցումը:

Վերոհիշյալ երևույթը ծագում և շատ տարածվում է 10—13-րդ դարերում, այսինքն այն ժամանակ, երբ Հայաստանում սկսում է շատանալ փողատեր մարդկանց թիվը: Իրենց նախնիներից ժառանգելով սեր դեպի հայրենի շինարարությունը, յուրաքանչյուրը ոք ցանկանում էր հնարավորության չափով մասնակցել այդ գործին: Հարուստ փողատերերը կառուցում էին մեծ վանքեր, հիկեղեցիներ, իսկ միջակ փողատերերը, որոնք ավելի մեծ թիվ էին կազմում, շինում էին մի բուրգ, խորան, սյուն, խաչքար: Իրանով հնարավորութուն ստանալով արձանագրել և հավերժացնել իրենց և իրենց մոտիկների անունները:

Սա հայրենասիրության մի արտահայտություն է, որին և պետք է մի կողմից նաև վերագրել պատմական Հայաստանի ճարտարապետական հուշարձանների տարբեր տեսակների այդ-

քան մեծ թիվը: Այս մեծ հայրենասիրութիւնը կանգ էլէր առնում պատմական և քաղաքական և ոչ մի արհավիրքի առաջ: Շիրաքարական արձանագրութիւններում մենք հանդիպում ենք անվանի իշխանների, խոշոր առևտրականների, արհեստավորների և հաճախ նաև կանանց անունների: Սերը դեպի հայրենի շինարարութիւնը բնորոշ էր բոլորին, մեծին և փոքրին, իշխանին և ռամիկին, տղամարդուն և կնոջը:

1232 թվին, այսինքն սբ. Գրիգոր եկեղեցու ավարտման հաջորդ տարին սկսվում է մոնղոլների առաջին արշավանքը դեպի Հայաստան: Կանգ է առնում խաղաղ շինարարական կյանքը: Երկիրը ենթարկվում է սրի և հրի: Մոնղոլների ասպատակութեանը դոհ են դառնում Հայաստանի գյուղերն ու քաղաքները: Սպանվում, թալանվում և գերեվարվում է ժողովուրդը, դերութեան են ենթարկվում նաև Նոր Գետիկի միաբանները, Վանական Վարդապետը և Կիրակոս Գանձակեցին: 1236 թվին արշավանքի վերջում գերութիւնից վերադառնում է Գանձակեցին, որը տեսնում է, որ Նոր Գետիկը «...Աւերեալ էր ի նոցանէ և այրեալ շինուածքն»...¹

Սակայն հենց որ մի փոքր հեռանում են դաժան նվաճողների ձիերի սմբակների ձայները, նորից վերսկսվում է շինարարութիւնը Հայաստանում: Վերաշինվում և վերականգնվում է նաև ավերած և այրած Նոր Գետիկը: Հաջորդ 1237 թ. արդեն կառուցվում է մի նոր եկեղեցի, որն իր արվեստով գերազանցում է նախորդներին:

Այս նոր եկեղեցին կոչվում է Նույնպես սբ. Գրիգոր: Առաջինի հետ չգործելու համար սա կանվանենք երկրորդ սբ. Գրիգոր:


Գանձակեցին այս եկեղեցու կառուցումը վերագրում է Գրիգոր Տղա՝ իշխանին:

«Սա (Գրիգոր Տղա իշխանը—Հ.Զ.) խնդրեաց յԱւագէն, յորդոյն Իւանէի, ղվանքն Գետիկ, իւր տեղի գերեզմանի:

¹ Գանձակեցի, էջ 239.

² Գրիգոր Տղա իշխանը եղել է Իվանի իշխանի որդի Ավագի հեջուրը (սենեկապետ), Վախթանգ Հաթեբեքու թուրք Գառմութեան մեջ հայտնի է որպես Կայան բերդում պաշարված Ավագի ղեսպան, որը Չարմաղանի մոտ է ուղարկվում նրան հայտնելու Ավագի անձնատուր լինելու համաձայնութիւնը: Սրա անունը մի քանի անգամ հիշատակվում է Հռոմոսի արձանագրութիւններում:

և վասն յոյժ սիրելոյ զնա՝ ետ նմա: Գնեաց գիւղ մի ի նըմանէ Վաշխէ անուն մերձ յԱղստեվ, ետ զայն ի վանքն և այլ բազում արգիւնս, գրեանս և խաչս և անասունս: Շինեաց և հրաշազան եկեղեցի մի երեք-խորան, մերձ ի գաւիթս եկեղեցւոյն, շինուած զարմանալերտ, և անուանեցաւ եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի:²



Նկ. 3. Երկրորդ ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան ճակատը

² Գառնակեցի, էջ 210:

Աստվածածին եկեղեցու բեմի արձանագրության համաձայն (արձ. հ. 3) այս Գրիգորն իրեն անվանում է «Հեջուր ամիր սպասալար Ավադի, որդի Սմայատա, որդւոյ մեծին Վախտանգայ կողմնապետաց աշխարհին Արցախա»¹, այսինքն Նոր Գետիկի հիմնադրմանը օգնող, Մխիթար Գոշի բարեկամ Վախթանգ Հաթեւրքու թոռը:

Երկրորդ սբ. Գրիգոր եկեղեցին երեք խորան ունեցող քառանկյուն, թաղակապ մի գոգտրիկ եկեղեցի է, երկթեք սալահատակված տանիքով, առանց դմբեթի, ներսից և զբւից գեղեցիկ քանդակազարդ: Նշանավոր են նրա մուտքի մոտ գտնվող երկու սքանչելի խաչքարերը, որոնցից մեկը գտնվում է նրահանի Պետական Պատմական թանգարանում և հանդիսանում է հայ միջնադարյան քանդակագործության լավագույն նմուշներից մեկը (տես նկ. 5, 6):

Այս եկեղեցին թե իր արտաքին տեսքով, և թե իր նուրբ քանդակներով, խիստ կերպով տարբերվում է վանքի մյուս շենքերից: Ինչպես երևում է թե եկեղեցին շինել տվողը և թե նրա վրա աշխատող վարպետները առանձին սիրով և հոգատարությամբ են վերաբերվել այդ շենքի կառուցման և նրա քանդակազարդման գործին:

Այս հուշարձանը և հատկապես նրա մուտքի խաչքարերը իրենց զարգաքանդակներով ուրույն տեղ ունեն հայկական արվեստի պատմության մեջ: Նրանք կատարելության են հասցնում այն ոճը, որը արվեստագիտության մեջ հայտնի է «Սելջուկյան ոճ» անունով:

Սելջուկյան, այս նեղ անվան տակ պարունակված է արվեստի մի ամբողջ էպոխա, որն իր գոյությունը պահպանելով ամբողջ երկու դար, իր մեջ ընդգրկում է մի հսկայական տարածություն՝ Փոքր Ասիա, Անդրկովկաս, Իրան և Միջին Ասիա:

Այս ոճը ստեղծված է բաղմալթիվ ազգերի, — անկախ նրանց դավանանքից — շանքերի միջոցով: Յուրաքանչյուր երկրում ունենալով իր ուրույն ազգայինը, տեղականը, նա ունի նաև մի ընդհանուր գիծ, որը ստացել է տարբեր ազգերի ու ժողովուրդների ոճերի սինթեզից:²

¹ Գանձակեցի, էջ 210.

² Այս մասին տես Н. Я. Марр «Анн» № 65—70, И. А. Орбели — «Проблема Сельджукского искусства», Труды III Иранского международного конгресса, Москва—Ленинград, 1939.

Հուշարձանի վրա եղել է շինարարության արձանագրություն, որը դժբախտաբար շատ վատ է պահպանվել (արձ. 18):

Վերջին շենքը, որը կառուցվում է Նոր Գետնկում, վանքի զբնակիչ սարալանջի վրա դառնում է. Գեորգի երեք խորան ունեցող եկեղեցին է:

Այս եկեղեցու բնմի արձանագրությունից երևում է, որ նա կառուցված է ՉԴ (704—1255 թվին) Սաչատուր վարդապետի և Բարսեղի կողմից:

Այդ մասին Գանձակեցին էլ գրում է.

«...և յութհարիւր երեք թուին¹ Սաչատուր վարդապետն և եղբայր իւր Բարսեղն շինեաց եկեղեցի մի երեք-խորան հանդեպ վանիցն, գմբեթաւոր, յանուն սրբոյն Գէորգեայ»:²

Հ.Պ.Կ. Դիլիջանի շրջանի ուղեցույց արտմում սա համարվում է «սբ. Հովհաննիսեանց» մատուռը, որը, ինչպես վերը տեսանք, բոլորովին այլ շենք է:

Մի երեք խորան փոքր, անշուք, գմբեթավոր եկեղեցի է շինարարական միակ արձանագրությունով (տես արձ. № 16):

Սրանով ավարտվում է շինարարությունը Նոր Գետնկի վանքում:

* * *

Հայաստանի պատմական ճարտարապետական հոյակապ կոթողներ կերտող հանճարեղ վարպետներին բնորոշ է անսահման համեստությունը:

Բաղմաթիվ հուշարձանների վրա մեզ հայտնի են հազվադեպ վարպետների անուններ, այն էլ մենք կարող ենք կարգալ քանդակված շենքի որևէ հեռավոր, մութ անկյունում:


Թերևս Նոր Գետնկն այս կողմից մի քիչ ավելի երջանիկ է, որովհետև նրա վրա պահպանվել են մի քանի վարպետների անուններ:

Նոր Գետնկի շինարարության վրա աշխատող վարպետները ամենանշանավորը Մխիթար հյուսն է. սա եղել է վանքի միա-

¹ Պետք է լինի յոթհարիւր չորս թուին:

² Գանձակեցի, 211:

բան և երկար տարիներ աշխատել է վանքի շինարարության վրա։
Գավթի հյուսիսային կամարի վրա կարդում ենք.
Եւ Մխիթար հիւան միայրան և աշխատող
այս եկեղեցոյ ի մ'անկու/թենէ մինչ ի ծերութիւն
շինեցի զսուհն աղաւթից... (արձ. № 9):



Նկ. 4. Վարպետ Պողոսի արձանագրու-
թյունը խաչքարի քանդակների մեջ

նագրությունը սբ. Գեորգ մատուռի վրա է քանդակած (№ 16),
որտեղ սակայն անուններ չկան.

...Տէր Աստուած ողորմեա... Եւ ամենայն աշխատող
դպցն ի սմա:

Ջանդակատան № 17 արձանագրության վերջին տողերը.

«Արդ աղաչեմ զամենայն ժառանգաւորսդ յիշման
արժանի արնէք զամենայն աշխատեալսն ի սմա
առաւել զԱթլոսն եւ զԳրիգորն:

Եվ վերջապէս չափազանց համեստորեն է հիշված չքնաղ
խաչքար քանդակող ՊԱՒՂՈՍԻ անունը, որ գետեղված է խաչքա-
րի զարդաքանդակների հյուսվածքների մեջ:

Հավանաբար այս նույն Պողոս վարպետի ստեղծագոր-
ծության արդյունքն է նաև եկեղեցու պատերի վրայի ներսի և
զբոսի քանդակները:

* * *

Ավարտելով վանքի շինարարության պատմությունը, փորձենք արձանագրությունների և մատենագրական տեղեկությունների հիման վրա հնարավորին չափ վերականգնել նաև վանքի ներքին կյանքը:

Արձանագրությունների տվյալներով մենք կարող ենք կազմել նաև Նոր Գետիկի վանքի վանահայրերի մոտավոր ցուցակը:

Հետաքրքրական է մի հանգամանք, որ Գոշն իր վանքում վանահայր չի եղել: Հավանաբար նա եղել է միայն վանքի հոգևոր առաջնորդը, և ուսուցիչը, իսկ մյուս գործերը հանձնված են եղել վանահորը:

Տաճարի կառուցման արձանագրությունը (№ 1) հիշատակում է:

«Ձեռամբ վարդապետին Մխիթարա և
հայրութեան Վարդանա»:

Այստեղից երևում է ուրեմն, որ Նոր հիմնադրվող վանքի առաջին վանահայրն է եղել Վարդանը 1191 թվին:

Գանձակեցին պատմում է, թե Մխիթարը զգալով իր մոտալուռ վախճանը, հավաքում է վանքի միաբանությանը և իր աշակերտներին, օրհնում և նրանց վանահայր է կարգում իր աշակերտներից լավագույնին՝ Մարտիրոսին:

«...և զմի ոմն ի նոցանէ ընտրեալ, Մարտիրոս անուն նորա, որ աշակերտ և ընտանի էր նմա, կացոյց զնա առաջնորդ նոցա, մանուկ տիօք, բայց կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաձայն յերգս պաշտամանն, և առատամիտ ընթերցող, և երագ ի գրչութիւն. նմա հրամայեաց իշխել նոցա»:¹

Մարտիրոսն այսպիսով դեռ երիտասարդ, վանահայր էր նշանակվել Նոր Գետիկի վանքում: Նա այդ պաշտոնը վարել է 40 տարի: Նրա անվան հետ է կապված վանքի բավական մեծ շինարարությունը: Գանձակեցին՝ «Վասն որք յետ նորա (Մխ. Գոշ, Հ.Զ.) կալան առաջնորդութիւն»² գլխում մեծ գովասանքով է խոսում Մարտիրոսի մասին:

¹ Գանձակեցի, էջ 207:

² Նույնը, էջ 209—211:

«Փառաւորեցաւ վաճառքն և հռչակեցաւ սուրբ վարդապետին՝ իմաստութեամբ Մարտիրոսի առաջնորդին. քանզի այր շինարար էր»։¹

40 տարուց հետո Մարտիրոսը իր կամքով հեռանում է այդ պաշտոնից, հավանաբար ծերութեան պատճառով։

Դժբախտաբար միայն մի արձանագրություն, այն էլ անթվակիր, հիշատակում է Մարտիրոսի անունը։

«Ի Հայրութեան Մարտիրոսի»

Մարտիրոսին փոխարինում է Մխիթար վարդապետը։ Արձանագրություններից մեկում մենք կարդում ենք.

«Ի Հայրութեան Մխիթարա վարդապետի»։

Գանձակեցին վերահիշյալ գլխում դրում է.

«Կալա յետ նորա (Մարտիրոսի Հ.Ձ.). Մխիթար ոմն և այլ սա, և այլ նա, Յովասափն, և այլ սակաւօրեայ, և Աբրահամ վարդապետն»։²

1260 թվի Հով. Արմանեցու արձանագրութեան մեջ (№ 7), որով նա Գետիկի բնակիչներին ազատագրում է Գոնցա Խաթունին վճարվելիք հարկից, հիշատակում է

«...Ի Հայրութեան Աբրամի—վարդապետի...»

Նույն գլխի վերջում Գանձակեցին դրում է.

«Եւ ապա տէր Յովհանէս Արմանեցին, որ և Հաղարծնին էր առաջնորդ, ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի յութ՝ հարիւր հինգ թուականին։ Սա շինեաց ի Հաղարծնին զսեղանատունն երեւելի սրբատաշ վիմօք. և ապա դնաց ի մեծ աթոռն Հաղբատ»։³

Պատմիչի այս հիշատակությունը պետք է դնել 1260 թվականից հետո, որովհետեւ 1260 թ. վաճառքի վանահայրն էր Աբրահամ վարդապետը, իսկ Արմանեցին այդ ժամանակ ըստ Գանձակեցու արդեն եպիսկոպոս էր և հավանաբար Հաղարծնի առաջ-

¹ Գանձակեցի, էջ 209;

² Նույնը, էջ 210;

³ Պետք է լինի «յաւթ հարիւր» — հալառակ զեպքում կոտացվի 1356, այն-ինչ պետք է լինի 1256.

⁴ Գանձակեցի, էջ 212.

նորդ: Նա 1260 թվից հետո միայն կարող էր լինել նաև Նոր Գետիկի վանահայրը:

Սրանով սպառնվում են Գանձակեցու տված տեղեկությունները վանքի առաջնորդների մասին: Նվազում են նաև արձանագրությունների տեղեկությունները:

1273 թ. Նոր Գետիկի վանահայր է եղել Հովսեփը, որին երուսաղեմի № 1288 ձևագրի գրիչն անվանում է «ամենայնիւ օրինակ բարեաց վարիւք և բանիւք»:

Ումեկի որդի Ճարի 1283 թվականի արձանագրությունները հիշատակում են վանքի առաջնորդ Դասաբ վարդապետին:

Վերջին տեղեկությունը գտնում ենք (№ 17) 1291 թ. արձանագրության մեջ, ուր Սարգիս վարդապետ անունով մեկը հիշվում է իբրև վանահայր Նոր Գետիկի:

«Մարգին վարդապետ հայր վանիցս»:

Սրանով ավարտվում է մեր ունեցած տեղեկությունները վանքի առաջնորդների մասին:

Վերահիշյալ տեղեկությունների հիման վրա Նոր Գետիկի վանահայրեր են հիշվում հաջորդական կարգով հետևյալ վարդապետները՝ Վարդան վարդապետ — 1191—1212 թ.թ., Մարտիրոս վարդապետ 1212—1252 թ.թ., այնուհետև Մխիթար վարդապետ, Հովսեփ վարդապետ, Աբրահամ վարդապետ (1260), Հովհաննես Արմանեցի, Հովսեփ վարդապետ, Դասաբ վարդապետ (1283), Սարգիս վարդապետ (1291):

Այսպիսով մենք հնարավորություն ունենք մեկ դարի ընթացքում թվարկել Նոր Գետիկի առաջնորդների մոտավոր ցուցակը:

Նոր Գետիկի վանքը պատմության մեջ հայտնի է նաև որպես դպրոց, որտեղ սովորել և գործել են հայկական կուլտուրայի նշանավոր գործիչներ:

Դպրոցը հիմնադրել է Մխիթար Գոշր, որը և 20-ից ավելի տարիներ եղել է այդ դպրոցի ղեկավարը: Նրա ուսուցչական համբավը տարածված է եղել ամենուրեք, նրա շուրջն էին համախմբվում տարբեր տեղերից բազմաթիվ աշակերտներ, որոնցից ոմանք նույնիսկ թաքցնելով իրենց վարդապետական կոչումը՝ գալիս էին նրա մոտ նորից սովորելու:

«Բազումք որ էին ի կարգի վարդապետաց ծածկէին ղինքեանս և գային ի կարգի աշակերտաց կալով՝ ուսա-

նէին ի նմանէ, և առնուին վերստին հրաման և բաղումք յաշակերտաց նորա հասին ի պատիւ վարդապետական»¹

Նոր Գետիկի վանքը կարճ ժամանակամիջոցում դառնում է նշանավոր կրթական և կուլտուրական կենտրոն:

Գանձակեցին մի հատուկ գլխում թե «Հյք էին որք երեւելիք էին յաշակերտսն նորա»,² գրում է Մխիթար Գոշի աշակերտների մասին:

Պատմիչը հատկապէս նշում է մի քանի աշակերտներին, նախ Հովհաննէս Վանական Վարդապետ Տալուշեցուն³ (որին աշակերտել է ինքը Գանձակեցին): Պատմիչը մեծ գովասանքով է խոսում նրա մասին:

Վանական Վարդապետը ծնվել է 1181 թ. և մահացել 1251 թ.:

Գեղեցիկ է Գանձակեցու տված բնորոշումը նրա մասին.

«Հալածանքի մէջ քաջարի հովիւ եւ տառապանաց մէջ անխոնջ ուսուցիչ»:

Վանականի գլխավոր գործը պետք է լինել նրա մոնղոլների պատմութիւնը, որը ցավոք սրտի, մեղ չի հասել, նրա այս գործի մասին շատ մեծ գովասանքով գրում է Գանձակեցին: Բացի այս, Վանական վարդապետը հայտնի է նաև մի շարք եկեղեցական աշխատութիւններով: Նոր Գետիկի վանքում մնացել է նրա գրած արձանագրութիւնը (№ 19):

«ՁՅՈՂԱՆՆԷՍ ԶՎԱՆԱԿԱՆՆ ՅԱԴԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ»

Այնուհետև Վանական վարդապետը տեղափոխվում է Գանձասար, կառուցում է խորանաշատ եկեղեցին, ուր և հիմնում է իր դպրոցը: Այստեղ իր աշակերտների հետ 1232 թվին նա գերի է ընկնում մոնղոլների ձեռքը, որտեղից ազատվում է ժողովրդի կողմից նրա փոխարեն վճարած փրկանքի շնորհիվ:

Գերութիւնից վերադառնում է նորից խորանաշատ, որտեղ և 1251 թվին մահանում է:

Ինչպես վերը տեսանք, Մ. Գոշի լավագույն աշակերտներից էր նաև Մարտիրոս վարդապետը, որի շինարարական գործունեութեան հետ ծանոթացանք վերը:

¹ Գանձակեցի, էջ 205:

² Նույնը, էջ 205—206:

³ Հ. Հ. Ոսկեյան—«Յովհաննէս Վանական Վարդապետ», «Հանդես Ամսօրյա», 1921 թ., Զարհամալեան—«Հայ դպրութեան պատմութիւն», 730—736, Ալիբաև—Հայագատում, 105:

Գանձակեցին հիշատակում է նաև մի քանի աշակերտների անուններ.

Թորոս վարդապետ, Շառաջնոյն Թորոս անունն ի սահմանացն Մեղիտենույ Հայոց, հայր նորա Հայկազն և մայր նորա Ասորի, այր հեղ և խոնարհ առաքելն ի աղքատասէր յոյժ, ասպնջնական օտարաց և առատ ի տուրս, որ, զժամանակ կենաց իւրոց բարիքապէս վարեալ ի ծերութիւն պարարտութեան յաւելաւ առ հարս իւր, և կայ թաղեալ ի հռչականուն վանքն Հաղբատ ի գլուխ վանացն ի գերեզմանս եպիսկոպոսացն և վարդապետացն...»¹

Նոր Գետիկի մյուս նշանավոր աշակերտն է մեզ ծանոթ Կիրակոս Գանձակեցին:

Սրա մասին կենսագրական տեղեկութիւններ կարելի է քաղել իր պատմութեան տարրեր գլուխներէց: Ծնվել է Գանձակում 1201 թվին, մահացել է 1272 թ.: Կյանքի մեծագոյն մասը անց է կացրել Նոր Գետիկում: 1232 թվին նա գերի է ընկնում մոնղոլների ձեռքը: Ծվ որովհետև նա տիրապետում էր հայերենին, Պարսկերենին և թուրքերենին, մոնղոլ ղորավարները նրան օգտագործում էին որպէս քարտուղար և ոչ մի վերլանքով չէին ցանկանում ազատել:

1236 թ. Կիրակոսը փախչում է գերութիւնից և վերադառնում Նոր Գետիկ:

Կիրակոսը եղել է վանքի հեղինակավոր անձնավորութիւններից: Թերևս նա էլ Մխիթարի նման ղեկավարում էր վանքի գլխոցի մտավոր կյանքը:

Այսպէս, օրինակ, համաձայն № 7 արձանագրութեան, Հովհաննես Արմանեցին ազատում է Նոր Գետիկի ժողովրդին հարկից և խնդրոյ Կիրակոս վարդապետին, որը հավանաբար Գանձակեցին պետք է լինել:

Նոր Գետիկում պահպանված է Կիրակոս Գանձակեցու անվամբ ևս մի արձանագրութիւն, որի համաձայն վարդապետը վանքին է նվիրում 20 զիրք, 40 դահեկան, մեկ շուրջառ և կառուցում է դասեր կոչված բաժանմունքներ եկեղեցում (արձ. № 20):

Գանձակեցին շատ մեծ ծառայութիւն է մատուցել հայ

¹ Գանձակեցի, էջ 205:

պատմագրութեանը իր «Պատմութիւն Հայոց» աշխատութեամբ։ Նրա պատմութիւնը սկսվում է Գրիգոր Լուսավորչից և հասնում է մինչև 1965 թիվը, հիմնական մասն է կազմում վերջին դարի դեպքերը։

Ի տարբերութիւն միջնադարյան մյուս պատմիչների, նա խորհիկա չէ, այլ մանրամասն և հանգամանորեն գրված՝ պատմութիւն։ Լեզուն պարզ է և գեղեցիկ։

Այս աշխատութեանը կարևոր է ոչ միայն հայոց պատմութեան համար, այլ և Ադրբեջանի, Միջին Ասիայի և հատկապես մոնղոլների պատմութեան համար։

Այս հանգամանքով է բացատրվում այս գրքի լայն տարածումը։

Դանձալեցիին ունեցել է հայերին երեք հրատարակութիւն (Մոսկվա, 1858, Վենետիկ 1865, և Թիֆլիս 1909), ֆրանսերեն լեզվով երկու հրատարակութիւն (առաջինը թարգմանել է Պետերմանը, Բեռլին 1858, երկրորդը Բրոսեն Փարիզ, 1871), Գաղվածորեն ռուսերեն է թարգմանել զանազան հատվածներ Գեղովբե Պատկանյանը։

Վիեննայի № 84 ձեռագրում կիրակոսը կոչվում է «Կիրակոս ընտրեալ վարդապետ ի մեծահռչակ ուխտէն Գեաղայոյ»։

13-րդ դարի ընթացքում այս դպրոցի սաներն արդեն սկսում են ուրիշ տեղերում հիմնել իրենց դպրոց-վանքերը և էլ ավելի տարածել Նոր Գեաղիկի տրագիցիաները։ Այդ ճյուղավորութիւններից ամենից նշանավորն է Գոշի վաժառույն աշակերտ Վանական վարդապետի հիմնած վանքը Խորանաշատում։ Այնուհետև Նոր Գեաղիկի աշակերտներից հանգիպում են նաև այլ վանքերում։

13-րդ դարի 2-րդ կեսից Նոր Գեաղիկը սկսում է թուլանալ, իսկ դարի վերջին բոլորովին դուրս է գալիս ասպարեզից։ Նրա աշակերտները ցրվում են այլ վայրեր և համատարիմ մնալով իրենց դպրոցին նրանցից շատերը իրենց նույնիսկ Գեաղիկցի մականունն են տալիս։ Այսպես օրինակ 1328 թվի Գլածորում գրված ավետարանի գրիչ Դավիթը իրեն անվանում է Գեաղիկցի։

Իծընթացում Նոր Գեաղիկի դպրոցի գործունեութեան և սաների մասին մեզ շատ քիչ տեղեկութիւններ և փաստեր են հասել, եղածներն էլ ոչ միշտ են լրիվ և սպառիչ։ Այնուամենայնիվ ունեցած տեղեկութիւնները բավական են դպրոցի արդյունա-

վետ և ետուն գործունեության մասին քիչ թե շատ լրիվ տեղեկություն կազմելու համար:

Թվում էր, որ դպրոցի դեմքը պատկերացնելու համար բավական է նշել նրա ներկայացուցիչներից միայն երեքին՝ Մխիթար Գոշին, Վանական վարդապետին և Կիրակոս Գանձակեցուն, որպեսզի պարզ լինի նրա խոշոր դերը հայկական միջնադարյան կուլտուրայի զարգացման գործում:

Նոր Գետիկն որպես ժամանակի նշանավոր վանք, որը ունեւր դպրոց, ուր մեծ թվով աշակերտներ են սովորել, որտեղ եղել է նաև գրադարան, չէր կարող չծառայել իրեն վայր նաև ձեռագրերի արտադրության համար:

Յավաք սրտի Նոր Գետիկում գրված և արտագրված ձեռագրերից նույնպես մեզ շատ քիչ օրինակներ են հասել:

Առաջին ձեռագիրը մի երկաթագիր նկարազարդ ավետարան է, որը միաժամանակ եղել է Նուխլա Գեոքքուլազ գյուղում:¹ Ձեռագիրը գրված է Խաղբակյան Ջաջուռի դուստր Վանինի իշխանուհու պատվերով 1232 թվին Հավապտիկ վանքի համար:²

Ձեռագրի էջ 3429-ում հիշատակարանը հետևյալն է.

«Արդ գրեցաւ սա ի թուիս հայոց ՈԶԱ (681—1232) ի գաւառիս Կայկնոյ ի գերահռչակ ս. ուխտիս Գեաղայ, ընդ հովանեաւ ս. Ատուածնիս եւ սր. Լուսավորչս Գրիգորի, ձեռամբ մեղապարտ Ստեփանոսի յիշխանութիւն իշխանաց իշխան Աթաբեկ Իւանի եւ որդւոյ նորա Աւագին, եւ վանս զի Վրաց Թագաւոր ոչ գոյր, ունէր զաթուակալութիւնս դուստր Թամարին եւ ի հայրապետութեանն հայոց սր Կոստանդին եւ յԱղուանից հայրապետութեանն Յովհաննիսի Արդ աղաչեմ զամենեւեան որք ընթեռնուք կամ ընդաւրինակէք յիշես—

էջ 342-ը ջիք ի տէր Աստուած գրիստոսասէր պատրոնն զՎանինի զստացող սուրբ մատենիս յիշեսչիք ի Քա, զհայր նորա զբարեպաշտ իշխանն զՋաջուռ եւ զայն սուրբ նախնին նորա Յիշեսչիք իտէր զմեղապարտ գրիչս զՍեփանոս եւ զծնաւդս մեր

Յայսմ ամի եկն ազգն նետողաց եւ զմայրաքաղաքն Գան-

¹ Թե որտեղ է գտնվում նա այժմ, հայտնի չէ, թերևս նույն տեղում:

² Թե այս և թե հետևյալ ձեռագրերը հնարավորություն չունենալով անձամբ ուսումնասիրել, տեղեկությունները բաղել եմ Գ. Գ. Հովսեփյանի աշխատություններից. ա) Խաղբակյանը և Գոշիանը, պր. Ա. և հավելված Բ. Շնյութեր և ուսումն. հայ. մշակ. և այլն, պր. Ա.

ձակ հիմն ի վեր արարեալ կոտորեաց զժարդ եւ զանասուն եւ զբազումս ի քրիստոնէիցն»:

Մյուս ձեռագիրը գրված 1273 թ. գտնվում է Երուսաղեմում և կրում է 1288 համարը:

Մեզ ծանոթ է միայն նրա հիշատակարանը:

«Յամի եւթն հարիւրերորդի քսաներորդի երկրորդի թուականութեան հայոց, յորում ժամանակի կուէր: Զուղափառութեամբ ճշմարիտ աթոռակալ լուսաւորին մերոյ ար. Յակոբ և յԱղուանից ար. Ստեփաննոս եւ ի տիեզերականութեան Ազաղանին եւ յանիշխանութեան մերոյ աշխարհոյ, յաթարեկութեան Սաղունին եւ տէրութեան գեղոյս Ճարին: Աստառաւ կատարեցաւ տառ մատենիս ի սբ. եւ ի հոգեպաշտ վանս Գեորգի ընդ եւ սբ. Ածածնիս... տառ ոտս սբ. եւ վսեմապայծառ վարդապետիս Յովասաբիս, որ է ամենայնիւ, աւրինակ բարեաց վարիւք և բանիւք...»¹

Երեւանի Պետական Մատենադարանում կա մի թղթե ձեռագիր № 2606, որը համարվում է գրված Նոր Գետիկում: Սա Մխիթար Գոշի «Մեկնութիւն համառոտ մարգարեութեան Երեմիայի» աշխատութիւնն է: Արտագրված է 1197 թվին, ամփոփված է ուշ ժամանակի կաշեպատ կազմի մեջ: Զարգանկարներ չունի: Երեմիայի մարգարեութեան վերջում գրված է իրեն Մխիթար Գոշի հիշատակարանը, որը կրում է 1187 թվականը և նշում է, թե «Բրեցաւ յանապատիս Գետիկայ»:

Սրանից հետո գալիս է բուն ձեռագրի հիշատակարանը, գրված տաս տարի հետո, ոմն Դավթի կողմից, որը հավանաբար արտագրել է Գոշի ինքնագիր օրինակից, սակայն որտեղ նշված չէ Մխ. Գոշի հիշած Գետիկը. դա հին Գետիկն էր, որը սակայն շուտով կործանվում է: Ձեռագրի արտագրման տարին (1198) Մխ. Գոշն արդեն գտնվում էր Նոր Գետիկում: Կարելի է ենթադրել, որ այս ձեռագիրն արտագրվել է Նոր Գետիկում, որին երբեմն ուղղակի Գետիկ էլ էին անվանում, սակայն եղած տեղեկութիւններով հաստատել այդ կարծիքը հնարավոր չէ:

* * *

Նոր Գետիկի վանքը բավական մեծ կալվածքներ է ունեցել Գալվածքների մի մասը ստացել է վանքը հիմնադրման և

¹ Նույնը:

տոնակատարութեան առթիւ, իսկ մյուս մասը, հետագայում, նվերներ ընդունելու միջոցով:

Զաքարե և Իվանե իշխանները վասրի կառուցումն ավարտելուց հետո, բոլոր Գանձակեցու, նվիրում են.

«...Սահման ջրագարծովք լեռնէ ի լեռան, և բով մի յԱրասածոր և զԶորոճոր ի նահանգին Բջնոյ և զԱշաւա ի գլուխ վանացն, Շինեցին և ինքեանք գիւղ մի մերձ ի ծովակն փաքարգոյն անհնարին խորութեամբ, և անուանեցին զգիւղն յանուն ծովակին Տգրկածով... և այլ միւս եւս փաքարգոյն գիւղ ներքոյ վանիցն, զոր Ուռեւանջ անուանեցին»:¹

«Սահման ջրագարծովք լեռնէ ի լեռան», հարկաւոր է հասկանալ, որ Տանձուտա ձորը, մինչև այժմյան Թարասաչայ կոչված գետը, տալով այս տերիտորիան որպես սեփականութիւն Վանքին:

Հիմնում են երեք գյուղ Ուռեւանջ, (որի ավերակները գտնվում են վանքի արևելյան կողմում):² Տգրկածով, վանքի հարավում, որը մինչև հիմա կա և թուրքաբնակ է, և Աշան, որի տեղն անհայտ է:

Այս գյուղերում հավանաբար բնակութիւն են հաստատում Հին Գեորգիի շրջակայքում ապրող այն գյուղացիները, որոնց Կրկրաշարժից հետո Գոշը թույլ չէր տվել ցրվելու: Այս գյուղերը, ինչպես կտեսնենք, հարկ էին վճարում Զաքարյաններին:

«Բով մի յԱրասածոր» Սմբատեանը սա համարում է Դարաչիչակի մոտի հնում եղած պղնձահանքերը (Միսխանա):³

Նույն այս վայրի մասին Ինճիճյանը գրում է. «Բով մի յԱրասածոր ի սահմանս Բջնոյ որ էր ի Նիգ գաւառ Արարատում»:⁴ Այսինքն նույն Դարաչիչակը:

Այս բովի օգտագործումը վաղուց ի վեր դադարած է:


Վանքի ստացած նվերների չափն ու տեսակները պարզեցու ածենալով աղբյուրը արձանագրութիւններն են: Արձանա-

¹ Գանձակեցի, էջ 204:

² Բարխուդարեանց—«Արցախ», Բնաշխարհիկ բառարան:

³ Միսխանեանց, «Գեղարքունիք»:

⁴ Ինճիճեան—«Հնախօսութիւն Հայաստանեայց», հ. 2, էջ 182:



Նկ. 5. 13-րդ դարի խաչքար

գրութիւնները բաժանվում են երկու խմբի, մի խումբը, որտեղ մեկ աս մեկ նշում են տված նվերները և փոխարենը պահանջող համապատասխան հատուցում (պատարագ, ժամ) նվիրատուի և նրա ժողովների հոգու փրկութեան համար: Մյուս տիպի արձանագրութիւնները, որոնք ավելի մեծ թիվ են կազմում, չեն նշում կոնկրետ ինչ նվիրներ են տվել, այլ ուղղակի հիշում է հատուցվելիք պատարագի քանակը: Պատարագները քանակի համեմատութեամբ որոշել ստացված նվերների չափը, շատ հաճախակի և կամայական կարող է լինել, քանի որ հատկացվող պատարագն ամենայն հավանականութեամբ ավելի անհատական մտնեցում ուներ, քան թե սակագին: Միայն այս տիպի արձանագրութիւնների մեծ թվի հիման վրա պետք է ասել, որ նվիրները մեծ չափերի էին հասնում:

Վերցնենք մի քանի արձանագրութիւններ, որոնք նշում են նվիրների տեսակները:

Ես Հարր միաբան Սուրբ Աստուածածին էտու
 զՍաւգատափն ի Չաղացէն ի վերի վանքս և
 ստացա Բ աւր զեկեղեցիքս պատարագ...»
 Թւականին հայոց ՈԿՆ (551—1213) Ես Գոհար
 իաթունս ընդ առաջին միաբանութեան
 Ծառու. զիմ այլին և շինական մի ազատ որ
 Թաւադոմս ի սուրբ Աստուածածնիս և
 պարտին յիջման սուրբ հոգւոյն Բ խորան
 պատարագել:» (արձ. № 5):

Կան արձանագրութիւններ էլ, որոնք նշում են, թե ինչ տեսակ նվեր է տալիս, բայց որոշ կերպով չեն գրում իրի անունը և տեղը, օրինակ՝

«եկեղեցւոյս տուաք հաստատ հայրենիք յազգէ...»


Արձանագրութիւնների մի այլ տեսակի մեջ հիշվում է, թե այս կամ այն անձինք միաբանեցին սուրբ ուխտին, առանց նշելու նրանց տված նվերները և ստացան պատարագ: Միաբանելն, իհարկե, հասկացվում է որևէ նվեր տալու մտքով:

Կան արձանագրութիւններ էլ, որոնք միայն պատարագի օրն ու չափն են նշում, օրինակ՝

Ի տաւնին Սուրբոյն Սարգսի Ա.
սլատարազ Մխիթարա և Մայրախաթունին է

անխաւիանո

կատարիչքն աւրհնին յԱստուծոյ: (Արձ. № 6),



Նկ. 6. Վարդես Պողոսի խաչքարը

Արձանագրությունների այս
խումբը ամենամեծ թիվն է
կազմում:

Այսպիսով վանքը դառնում
է մեծ կալվածատեր. կազմա-
կերպվում է վանական տնտե-
սություն:

Ինչպես հայտնի է, անկախ
տիրակալ իշխանությունից
միջնադարում եկեղեցիներ
աղատված էր հարկատվու-
թյունից: Այս արտոնու-
թյունը քիչ բացառությամբ
պահպանվում էր նույնիսկ
նվաճողների կողմից: Սա-
կայն հարկից ազատ չէր
վանքի շուրջը բնակվող բնակ-
չությունը: Նրանք հարկ էին
վճարում կամ հրենց հոգևոր
տիրոջը կամ աշխարհիկ իշ-
խանին:

Այսպես, օրինակ, Նոր Գե-
տիկի վանքի շուրջը բնակվող
գյուղացիները, որոնք բնակ-
վում էին վերոհիշյալ Տգրկա-
ծով, Ուտեւանջ և Աշավա Զա-
քարյանների հիմնած գյու-
ղերում, հարկ էին վճարում
Զաքարյաններին:

Այդ մասին մենք իմանում ենք 1260 թվականի մի արձա-
նագրությունից, որի համաձայն Հովհաննես Արմանեցին աղա-
տագրում է Գետիկա ժողովրդին Գոնցա խաթունին (Իվանեի
որդի Ավագի կինը) վճարվելիք հարկից:

«Աստուծոյ ես տեր Յոխանէս
Արմանեցի ազատ գրեցի զԳեաւկա
Ժողովուրդս ի հարկէ որ տալին յաթուռն
յիշխանութեան Գոնցա խաթունին ի խնդրո
կիրակոս վարդապետին...» (արձ. № 7)

13-րդ դարի երկրորդ կեսին, երբ թուլանում է Ջաջարյան-
ների իշխանութունը, Նոր Գևորգը վաճառվում է Ժամանակի
նշանավոր վաճառական պարոն Ումեկին, 40.000 կարմիր դու-
կատով:

Այս մասին մենք իմանում ենք Աստվածածին եկեղեցու
բեմի մի մեծ արձանագրությունից: Այս արձանագրությունը
գրված է եղել կարմիր ներկով, բավական մեծ և գեղեցիկ տա-
ռերով, ցավոք սրտի բավական ընդարձակ արձանագրությունից
պահպանվել են միայն մի քանի տառեր:

Արձանագրությունը մեջ եմ բերում 19-րդ դարում կատար-
ված արտագրություններից¹

«Յուսով ողորմութեամբ Աստուծոյ ես Ճարս որդի պա-
րոն՝ Ումեկին թոռն Ճարին աշխարհաւ Մանձկերտացի, աշ-
խարհակալութեան Ղարա Նուին և թագաւորութեանս Վրաց
Դեմետրի Բաղրատունւոյ, իմ հայրն Ումեկ զենալ էր զԳե-
տիկ, ի խն կարմիր դուկատի,² ես Ճարս զնեցի զՅովս իւր
ամէն սահմանօքն ի դստն Ժամանակի, որ հայրենիքն ար-

¹ Հրատարակված է Ջալալեանց հ. Ա, էջ 138. Շահխաթունեանց, հ. Բ, էջ 367, Սմբատեանց, էջ 174, Բախուղարեանց—«Արցախ», էջ 350, Կ. Կոստանեանց—«Վիմական տարեգիր»:

² Հովսեփյան—«Նշանակիչ և ուսումնասիրություններ», պրակ Բ., էջ 31, Գ. Հարությունյան, Աղզ. հանդես, № 10-րդ, էջ 28:

³ Համաձայն արձանագրության պահպանված տողի ոչ թե «պարոն», այլ «պարոն»: Պարոն նշանակում է հիմնադիր, հովանավոր վանքի, եկեղեցու և իր ստորադրյալ իշխանի համար՝ գերագույն իշխանության. շատ տարածված է 13-րդ դարի վիմական արձանագրություններում:

⁴ Ուշագրության արժանի է «40000» թիվը: Հավանաբար սա մի խորհրդավոր թիվ է, շատ զործածական մեջնադրում: Այսպես օրինակ՝ Սահմադի 1261 թ. արձանագրության համաձայն Մրենի ամրոցի կառուցումը արժեցել է 40000 դուկատ: Այս մասին մանրամասն տես Н. Марр—«Новые материалы по армянской эпиграфике», 1. Зап. Вос. Отд. Русск. Арх. Общ. т. VIII, в. I—II ст. 84.

Ժան էր և ոսկին թատնգ, ի ի՞նչ կարմիր դուկա տուր Գեուկայ Աստուածածինին իմ հոգւոյ տանս յիշատակ, անջնջելի իմ ծնողացն Ումեկին և Թագուհւոյն, ինձ և իմ որդեացն Արդութին և իւր եղբարցն: Առջնորդութեամբ Ղասապ վարդապետի և միաբանքս սահմանեցին զաւագ հինգ շաբաթ աւրն եւ Զատիկն աւրն դամէն եկեղեցիքս պատարագ որչափ մեք կենդանի եմք մեր ծնողացն լինի և ետ յեկից մերոց յաշխարհէս մեղ լինի: արդ մի զայս գիւղս հանել ջանայ յայս եկեղեցւոյս, կամ զիմ հիշատակն խափանէ, ով ոք և իցէ որ լինիցի ի ծննդոցն Աղամայ եղիցի նգովեալ ՉԼԲ (732—1283):

Այս առևտուրը տեղի է ունեցել 1260—1266 թվականներին պարոն Ումեկի և Գոնցա խաթունի միջև: 1266 թ.: Ումեկի մահվան թիփն է: Առևտուրը չէր կարող տեղի լինել 1260 թվից առաջ, քանի որ համաձայն № 7 արձանագրութեան դեռևս 1260 թ. Գեուկա ժողովուրդը հարկ էր վճարում Գոնցա խաթունին: Այսպիսով սխալ է Գ. և Հովսեփյանի այն կարծիքը, որ իբր թե Ն. Գեուկի վաճառումը տեղի է ունեցել Ավագի և Ումեկի միջև 1242—1250 թվականներին (1250 թ. Ավագի մահվան տարին է): Հավանաբար արժանապատիվ հեղինակին ծանոթ չէ եղել մեր № 7 արձանագրութեանը:

Պարոն Ումեկն¹ 13-րդ դարի մեծանուն առևտրականներից էր: Ինքը Մանադեկերացի էր, ապրում էր Կարինում:² 1242 թ. մոնղոլ զորավար Բաչու Նուխի կողմից Կարինի գրավման ժամանակ Ումեկը քաղաքի մյուս բնակիչների և իր հինգ եղբայրների ու բարեկամների հետ տեղափոխվում է Թիֆլիս: Հաստատվելով Թիֆլիսում նա շարունակում է իր առևտուրը, որը հատկապես աշխուժ էր մոնղոլների հետ: Նա շուտով ձեռք է բերում մեծ անուն և հուշակ ոչ միայն իր հայրենիքում, այլ և մոնղոլների արքունիքում:

Այդ մասին Գանձակեցին գրում է.

«703 (= 1254 — Մանգու Ղանի աշխարհագրի ժամանակ) . Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական,

¹ Սրա մասին մանրամասն տես Գաբեգին վ. Հովսեփյան—«Վախտանգ որդի Ումեկի և նրա տոհմը», Նյու-Թեյք և ռուսաֆասիստութեաններ հայ մշակութի և արվեստի պատմութեան», պրակ Ա:

² Վարդան Բարձրեղցի—«Պատմութիւն տիեզերական», էջ 193, Կ. Գանձակեցի, էջ 182:

Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին, այր բարեգործ... եւ հայր անուանեալ Թադաւորին վրաց Դաւիթի և մեծարեալ ի Ղանէն գրով և յամենայն աւագանոցն: Սա առատ տուր ետ Արղունին, և որ ընդ նմա և մեծարեցաւ յոյժ ի նոցունց»¹

1251 թվին Ումեկն Թիֆլիսում կառուցում է մի եկեղեցի Կաթողիկե անունով, որը հետագայում հայտնի էր Ս. Գեորգի եկեղեցի, կամ «Մայրանի, բերդի մեծ եկեղեցի» անունով:²

Ումեկն մահացել է 1266 թվին և հավանաբար Թադված է Թիֆլիսում իր կառույցած եկեղեցում:

Ումեկի անունը հիշվում է նաև Գեղարդի և Օհաննավանքի նվիրատվական մի քանի արձանագրություններում:

Ումեկն ունեւր երեք որդի. առաջին կնոջից—Թադուհուց Քարմիադին և ճար: Երկրորդ կնոջից՝ Մամախաթունից (Պաչե-նից, Հասան-Ջալալի դուստր) Վախտանգ:

1291 թ. № 17 արձանագրությունը հիշատակում է Դարբիմազնի Ժառանգներին՝ Արղուիթին և Թադադին:

1301 թ. № 4 արձանագրությունը ճարի որդի Թադադունը նոր Գեաիկն անվանում է «Դանձագին հայրենի եկեղեցի»:

Ումեկի երկրորդ որդին՝ Վախտանգը մահացել է 1344 թ. հայտնի է որպես Հովհաննես Երզնկացու մեկենաս, որի խնդրանքով վերջինս գրել է «Յադագս երկնային շարժման» աշխատությունը:

Նոր Գեաիկի վանքի վաճառքը Ջաքարյանների կողմից և նրա գնումը Ժամանակի նշանավոր առևտրականների կողմից, շատ քնորոշ երևույթ է իր Ժամանակի համար, երբ կամաթե ակամա, աստիճանաբար թուլանում են նախկին ազնվատոհմ իշխանական տները, սկսում են վաճառել իրենց հողերը և հեռանալով քաղաքական և պատմական ասպարեզից իրենց տեղը զիջում են նոր զարգացող զբոսատեք իշխաններին:

¹ Դանձագինի, 350.

² И. Орбели—«Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе» Христианский Восток, VI, 2, 1918 стр. 197—202, Л. Меликсет-Бекоев—«О междоусобице в Тифлисе 1197 г. по поводу кривой пасхи» ИзвИАИ т. III, 1925, стр. 59.

³ Պետ. Մատենադարան Զեռ. № 2144, էջ 188.

«Ի թվ 266 (1266) Սուլտան Մուրա Ֆեդիտառն աւերել զաշխարհն Գիւրիկեցոց... ի նոյն ամին փոխեցաւ ի Բրիստոս սուրբ կաթողիկոս հայոց տէր Կոստանդին և պարոն Ումեկն ի Տփլիս»:



Սրանով ավարտվում են մեր ունեցած տեղեկությունները Նոր Գետիկի կյանքի պատմության նկատմամբ:

Այսպիսով մենք հնարավորություն ունեցանք ուսումնասիրել Նոր Գետիկի պատմությունը ողջ 13-րդ դարի ընթացքում, սկսած նրա հիմնադրումից մինչև նրա վերջին թվական ունեցող արձանագրությունը:

14-րդ դարում արդեն թուլանում է Նոր Գետիկի հեղինակությունը: Նախկին այդ մեծանուն վանքը վեր է ածվում ժամանակի ընթացքում ավերակների:


Գոյություն ունեն կս երկու արձանագրություններ 17-րդ դարի երկու տապանաքարերի վրա (21, 22), որոնք սակայն մեզ ոչինչ չեն ասում: Սրանք հավանաբար վանքում եղած վերահսկիչի կամ մենավոր վանականների դամբարաններ են:

Իբրև եղբակացություն, մենք կարող ենք ասել, որ Նոր Գետիկի վանքը պատմական ասպարեզ եկավ ժամանակի հասարակական և քաղաքական անհրաժեշտությունից, ժամանակի ակնավոր գիտնական և հասարակական գործիչ Մխիթար Գողթնաբերով, որը և 20 տարուց ավել վարելով նրա մտավոր կյանքը կարողացավ դարձնել նրան, ինչպես ժամանակակիցներն են անվանում, «հռչակավոր», «հռչակագոյն» վանքերից մեկը:

Նա ունի իր ուրույն տեղը հայ միջնադարյան վանքադպրոցների շարքում, որպես ժամանակի առաջավոր գաղափարների ու ձգտումների պաշտպանի և տարածողի, ընդդեմ պահպանողական հետադիմական վանքերի և հոգևորականության (Հաղբատ, Սանահին):

13-րդ դարի երկրորդ կեսից սկսվում է վանքի անկումը: Նրա աշակերտները հեռանում են վանքից, ոմանք հիմնում են իրենց համար նոր վանքեր, մյուսները հաստատվում ուրիշ վանքերում, իրենց հետ տանելով իրենց վանքի և ուսուցչի լավագույն տրադիցիաները:

14-րդ դարում նա դադարում է որպես դպրոց գոյություն ունենալուց և ժամանակի ընթացքում վեր է ածվում ավերակների:



Նկ. 7. Աստվածածնա եկեղեցու հյուսիսային արձանագրած պատը

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

Այս հավելվածում տեղավորված են Նոր Գետիկի վանքի այն արձանագրությունները (22), որոնք այս կամ այն կերպ նյութ են ծառայել վանքի պատմութեան պարզաբանման համար:

Նոր Գետիկի բոլոր արձանագրությունները թվով 94 հատ են: Նրանք հետաքրքրութիւն են ներկայացնում թե՛ պատմական և թե՛ էպիգրաֆիկ տեսակետից:

Արձանագրություններն իրենց գրելու տեխնիկայով բաժանվում են չորս խմբի՝ 1. Արձանագրություններ, որոնք գրված են միայն ներկով (№ 2, 2): 2. Արձանագրություններ, որոնք գծագրված են ներկով և ապա փորագրված (№ 1, 6, 8 և այլն): Այս տիպի արձանագրությունները ամենամեծ թիվն են կազմում: Նրանցից մի քանիսը շատ լավ են պահպանել իրենց գծագրման առանձնահատկութիւնները, շատ պարզ նկատելի է նախնական ներկով գծագրված տրափարետային տարրերի հետքերը, երբեմն հանդիպում են տարրեր, որոնք այլ և այլ պատճառներով փնջել են միայն ներկով գրված: Այս հանգամանքը առիթ է տալիս Հ. Ա. Օրբելուն արտահայտելու այն կարծիքը, որ հայկական միջնադարյան արձանագրությունները գրվում էին նախօրոք պատրաստված տրափարետի միջոցով: Սա հաստատվում է նաև տառերի ձևերի և չափերի մանրադնին հետազոտութեան միջոցով:

3. Արձանագրություններ, որոնք գրվելուց, փորագրելուց հետո նորից ներկվում էին (3, 5, 9):

4. Հանդիպում էին նաև արձանագրություններ, որոնք փորագրված են նախկինում ներկով գրված այլ արձանագրութեան վրա (6):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆՆԵՐԸ

1. / / — Փակագծով վերականգնված են կոտրված գրերը:

2. () — Փակագծով լրացված են բնագրում բաց թողնված գրերը:

3. [] — Փակագծով ցույց են տրված ավելորդ գրերը:

4. — Գծիկով ցույց են տրված անվերծանելի գրերն իրենց քանակով:

5. Կետերով ցույց է տրված անվերժանելի տողերը
առանց զրհրի քանակը նկատի առնելու:

1. Աստվածածին տաճարի

Արհելյան որմի հյուսիսային խորանի հակատին.¹

1. Ի ՈՒ (640 - 1194) զինի Դ ամաց առնլո
զՆրուադէմ Սայահադնին

2. սկսեալ եկեղեցիս սուրբ Ի Նորո Գետիկ եւ
կատարի

3. յամս Ե Ի խանգար զատկին յունաց ձեռամբ

4. վարդապետին Մխիթարս Ի հայրութեան

Վարդանա ձեռնաւութեամբ բարեպ-

5. աշո իշխանի Վախտանդա և նորին զուգակցի

Արզու Խ-

6. աթուռի եւ նորին եղբարցն Սմպատա Վասակա

Խոյ-

7. զնա Գրիգոր[ոզր]խաի և(ւ)նոցին զաւակացն

Լիցի նոցա պա-

8. տարազ յեկեղեցիս Ի տաւնի Աստուածածնին

յ Գ աւու-

¹ Հրատարակված է՝ Ս. Ալալեանց, հ. Ա., էջ 140.

Կարգում է՝

1 տող «առն Լուդիմ Սայահանդնին»;

7—տող «Լիցի պատարագ»;

8 «Դ. աւար»

9—10 տողերը ամբողջովին բաց է թողնված և փոխարենը
զրված է «նոցին պապին»;

Սմբատեանց—«Գեղարքունի» էջ 178:

7 տող Գրիգորո Գրիս

Շահյաքունեանց—«Ստորագրութիւն», հ. Բ. էջ 367:

6—7 տող «Պորդն Գրիգորայ»

Բախուդարեանց—«Արցախ» էջ 350:

Кучук-Иоаннесов—«Древности Восточные», т. IV, ст. 15.

1. Կաստանյան—«Վիժական տարեգիր», էջ 38:

Սպանդիարյան—«Մշակ» 1911 № 16, 17, 18:

Դ. Հովսեփյան—«Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ Ա.

9. Ըսն բայց զ Ա Հասանա հաւր Վախտանգա
Եւ զ Ա մաւ
10. Ը հոցին Մամին և Բ հաւր Արզու Խաթունի
11. Քրդին բարեպաշտին անխափան: Զ տէր
12. Գրիգորէս յիշեցէք ի Քրիստոս
2. Արեւելացն որսի խորանի գլխին—միայն ներկված կարմիր
ներկով
1. Այս խորանս Անտոնի արդեամբք է շինած և
— ա — — —
2. Անտոնի պատարագն Անտոնի և իւր — — անայն
.....
3. /որ խափ/անէ դատի (ի Տեառնէ)¹
3. Բեմի հարավային մասում փորագրված և ներկված²
1. /Կ/ամաւն Աստուծոյ ես Գրիգոր Հեջուբ ամիր~
սպասաւար
 Աւագին որդի Սմայատա որդոյ մեծին Վախտանգա
2. /Կ/ողմնապետաց աշխարհին Արցախս աւետալ
 Աթաբեկ Իվանէի սնոյց զիս և իւր տանն
[աւել] Ավագին
3. /ա/ռաջնորդ կացոյց զի ոչ ունեի զաւա
և յուսով խնդրեցի զայս եկեղեցի ինձ
շիրիմ հան~
4. զստեան Աւագն ինձ երես և միաբան(քս
սա)հմանեցին
 զայս խորանս պատարագեալ ինձ դ~
5. Քրիստոս հանապազ ով կարդայք Աւագին
յերկար կենդանու~

¹ Հրատարակված է՝ «Ազգագրական հանդես» 10, 26:

² Ս. Զալալեանց, հ. Ա. 135, «Ազգ. հանդես» 10, 21—չկա Աթաբեկի
 և, Կաստանեանց—«Վիմակն Տարեգիր»:

Թիւն խնդրեցէք եւ Գրիգորոյ մեղաց թող-
 6. ութիւն թե աւագ կամ առաջնորդ խափանէ : ՅԺԸ :
 հայրապետացն նզոված լ(իցի) եւ ըմ մեղացն
 տիրէ

4. Հարավային որմի վրա. պատուհանից արեւիք—կարմիր
 ներկով

1. Աստուծով ես Թաղար/ա էնս?/ որդի Ճարին

2. Թոռն պարոն Ումեկին միաբանեցայ Սուրբ
 ուխտի-

3. Ի Գեոկայ մեր գանձայդին հայրեն-

4. Ի եկեղեցոյս եւ էտու ի հալալ արդեա-

5. Ինչ իմոց ի յիմ Հահնի գեղն ի նախեղուսն

6. յիմ խոս այգուսն Ճ. կուժ գինի զընծի մեծ կ[ժ]

7. ով եւ յայմեն ամի խ (ո) տով հոգեւոր հաւրն իմ

8. Դա/սապետ/ վարդապետին եւ միաբանքս
 հաստատեցին

9. ԳՔրիստոսի յայտնութեան աւրն զՋրուրհնէք

10. մեզ պատարագ (որ) քան լինի, որչափ ես
 կենդանի

11. եմ իմ ծնողաց եւ իմ եղբարցն լինի եւ յես
 էլից իմոց

12. յաշխարէս ինձ լինի պատարագն: Եւ ե-

13. Թէ որ յիմոց կամ աւտարաց խափանել ջանա-

14. : զիմ յիշատ(ակ)ս ի Քրիստոսի ահեղ ատենին
 իմ (մ) եղաց

15. Ի, պարտակն է եւ երկու Սուրբ Ժողովոյն
 նզովել եղեցի

16. Թվ. 25 (750—1301)¹

¹ «Աղագորական հանդես» էջ 24—25, 1 տողը սկսում է... մեք որդիք Ճարին, 6 տողը ԴԸՆԾԻ անհասկանալի բառի փոխարեն «Անձի» բառը հար-
 ցականով:

Բայ է Թողնված 7 տ. և 8 տ. առաջին կեսը

10 տ. ես կենդանի եմ բառի փոխարեն զըված է «տաւնի».

14 տ. չկա «զիմ»

5. Հարավային որմի արևելյան անկյունում փորագրված
և ներկված

1. Թւա հայոց Ոկն (551--1216). ես Գոհար
2. խաթունա ընդ առա-
3. ջին միաբանութեան
4. ետու զիմ այգին եւ շի-
5. նական մի ազատ որ ի
6. Թաազումս ի սուրբ Աստուածածի-
7. նս եւ պարտին յիջման Սուրբ
8. Հոգւոյն Բ խորան
9. պատարագել¹

6. Հարավային որմնասյան վրա

1. Ի տաւնի սրբոյն Սարգսի Ա պ-
2. առարադ Մխիթարա եւ Մայր-
3. ախաթունին է անխաւիան կա-
4. տարիչքն աւրհնին յԱստուծոյ²

7. Հյուսիսային մուտքի նակատի վրա. սպիտակի վրա
կարմիր ներկով

1. Աստուծով ես տէր Յովան-
2. էս Արմանեցի ազատ գրեցի
3. զԳեողա ժողովուրդս ի հարկէ որ տաին
յաթու-
4. ն յիշխանութեան Գոնցա խաթունին ի խնդրո
կիր-
5. ակոս վարդապետին ի հայրութեան Աբրամի
վարդապետի
որ զայս խաւիան-

¹ «Աղագրական հանդես», 10, 28.

² 1804-1805 թվականից հետո եււ. 1216 թ. փրկչական»

4, 5, 6 առումն հիշատական Յաչատուր Թաազումս(?)»

³ Այս արձանագրութեան տակից նկատվում է հնում գրված արձանագրության հետքերը:

6. է. յԱստուծոյ եւ յամէն Սրբոց նշովեալ եղիցի
եւ կատարողքն
7. աւրհնեալ միաբանքս տուաք նմա պատարագ
զմեծ եկեղեցիս
8. ի տաւնին Յովանու ի զատկին անխափան:
զընցաւ 28⁰
(709—1260) Թւիս
9. վկաութեամբ Յովհաննիսի —.....

Վարդան վարդապետի¹

8. Միա տակին

Ոկէ

1. Ես էնոք իմ որդովք
2. Միաբանեցա ի Սուրբ Աստուածած-
3. նիս ի հայրութեան Մխիթ-
4. աբա վարդապետայ եւ միաբանա(յ)
5. (կ)ամա(կ)ցութեամբ ստաց-
6. ա Բ պատարագ ի աւա-
7. նին Սուրբ Խաչին²

9. Գավթի հյուսիսային կամարի վրա

1. Ես Մխիթար հիւան միայրան եւ աշխատող այս
եկեղեցոյ ի մ/ան/կութենէ մինչ ի ձերութիւն
շինեցի զտունս աղաւթից.
2. /...../ ի/մով որդիացէլովս Յովհաննիսի եւ
ստացայ ինձ յիշատակ հոգեւոր Բ աւր պատա-
րագ կամակցութեամբ Սուրբ վարդապանն
առաջի Բրիսատոսի
3. /...../ էտացս եւ միայրան ուխտիս մի աւր
Մխիթ(թ)աբա եւ մի աւր Յովհաննիսի խաչ-

¹ «Ազգագրական Հանդես» 10, 27:² 1 տողը—«ԹՎ Ոկ—(680) և 1211 Թ. Փրկչական»:³ Զալալեանց, հ. Ա. 443:

դուռին տաւնին: Ով դմեր յիշատակս
խափանէ մեր մեղացս պարտ(ականէ)¹

10. Արեւելացն որսի վրա

1. Ի յաւուր գալստեան Հոգոյն ի մի սեղան
2. պատարազն հիւսանն է Մխիթարա եւ խափ-
3. անողքն դատ(ա)պարտին տալ ի տանջանս ն²

11. Սուրբ Գրիգորի եկեղեցի

- Իրսից եկեղեցու դռան կամարի և որմնասյամի վրա
1. Յուսուֆն Աստուծոյ Բ եղբարքս Մարտիրոս եւ
 - Գրիգոր եւ ամուսին Թամար, Աբել եւ Փերաւփ
 - շինեցին զեկեղեցիս ի սմա վեր անկեցին
 2. զայգիւն
 3. տէր Յով(հան) եւ միայր-
 4. անքս հառն նոցա պատ(արադ) զեկեղե-
 5. ցի Սուրբ տաւնն սրբոյն Գրիգորի: զն. խորան-
 6. ո Մարտիրոսի, Գրիգորի, Փէրաւփին, Թամար-
 7. ին, Նաղիսաթունին եւ Մաթէոսին անխափան. կ-
 8. ատարիչքն աւրհնին յԱստուծոյ ՈԶ (630-1231)³

12. Հարավային խորանի դռան գլխին

1. Ծառայն Աստուծոյ Գերդ եւ ամուսին իւր Կատայ
2. եւ զաւակսն նոցին շինեցին իւրեանց ընչիւք
3. զխորանս մի, աւր պատարազն նոցա է ի տաւնի
4. սրբոյն Գեորգայ Թափանողքն դատին ի

Տեառնէ⁴

¹ «Աղգազրական հանդես» 10, 20.

² Նույն տեղում.

³ Ս. Զալալեանց, հ. Ա. 144, քաջ է թողնված «Փերաւփ» շինեցաք զեկեղեցին», հետո գրված է «միտրանք խոստացան և այլն», Բաբխուդարեանց—«Աբգաթ» «Փերաւփ» փոխարեն «Վերեմայ», «Վիմական ասրեղիրք» 75, «Աղգազրական հանդես», 10, 31—32.

⁴ Բաբխուդարեանց—«Աբգաթ», 251, Кузук-Иоаннесов—Древности Восточные, т. V. Աղգ. Հանդես, 10, 32.

13. Հարավային խորանի դրսի որմի վրա

1. Մեք եղբարքս Աբուժայ Աբու-
2. զամբ եւ Հայրադեզ զմեր հո-
3. զւոյ արդիւնքս յեկեղեցոյ շի-
4. նութիւնս տուաք յուսով եւ մի
5. աւր պատարագ ի տաւնի սրբոյն Սար-
6. զսի մեզ հաստատեցին. խաժանողքն պատե...¹

14. Հյուսիսային խորանի գլխին

1. Ի տաւնի սուրբ Խաչին: Աւ աւր պատար-
2. ազ Խաչատ (ուր) վարդապետին եւ եղբարց
իւրոց եւ
3. ծնողացն զի նոցա ընչիւք
4. շինեցաւ խորանս²

15. Սբ. Հռիփսիմյանց մատուռի—դռան վերնասյամի վրա

1. Սուրբ Հռիփսիմէ
2. Ի Թւ. ՌԾԷ (657—1208) շինեցաք/
3. զեկեղեցիս Սերոբս եւ/
4. Ովասարս ի ձեռն/սուրբ վարդապետին/
5. Մխիթար/ա/ ի բարեխ/աւսութիւն/
6. մեզ եւ ծնողաց/մերոց եւ ե/
7. տուն.Ա. աւր պատարագ/ի տաւնի Սրբո/
8. Սարգսի .եւթէ ոք խափանէ դատի յԱստուծո³

¹ Ս. Զալալեանց, հ. Ա. 144. «Ազգագրական հանդես», 10, 32. հր. «Մբու-
ժայ» (?) «Աբուզմար» (?) 2 սող. Հայրապետ:

² Ս. Զալալեանց, հ. Ա. 144. Բաբխուդաբեանց—Արցախ, 351—352, Кузук-
Моханесов—Древн. Вост., т. IV.

³ Ազգագրական հանդես, 10, 33:

16. Սբ. Գեորգի մատուռի բնմի վրա

1. 27 (704—1255)
2. Տէր Աստուած ողորմեա խաչատուր վարդապետ-
3. ին եւ Բարսղին՝ շինողաց եկեղեց/ւայս
4. եւ ամենայն աշխատողացն ի սմա: ամէն¹

17. Զանգակատան 2-րդ հարկի արևելյան որմի վրա

1. Կամաւ ամենակալ-
2. ին Աստուծոյ ի թվ. հայոց. ԶԽ. (740—1291)
պարոնութեան Իգդիշ խա-
3. թունին եւ եղբարց խրոց Արդութին եւ Թաղադա-
[մուրին] (?) որդոց Քա-
4. ըիմադինին որդո մեծին Ումեկն եւ այլ որդո
Սութուխին մեք: Բ չեղբ-
5. արքս Դասապետ վարդապետ եւ Կարապետ եղաք
հիմն ի վերա եղեալ հիմանս եւ շինեց-
6. աք զանկապատուն եւ եկեղեցի յանուն սուրբ հրեշ-
տակապետացն Գաբրիէլի եւ Միքա-
7. էլի: Սակաւ ընչիւք մերովք եւ քեռոյն մերո
Իգնատոսի արդե /ամք/ բաղմաւք վերադրել
8. պարոնացն դրաք պարխապ շուրջ եկեղեցոյս եւ
այլ աշխատութիւնս ըստ մերում կարի
9. եւ Սարգիս վարդապետ հայր վանիցս եւ միա-
բանքս հաստատեցին զատկին և ճրագալուցին
պատարագ որ յեկեղեցիս Դ-
10. ասապետ վարդապետին եւ Կարապետին սանմանե-
ցին: Արդ աղաչեմ զամենայն ժառանգաւորսդ յի-

¹ Ս. Զալլիանց, հ. Ա. 145. Բաղխաւդարեանց—«Արցախ» 354, Куцук-
Иоаннесов—Древн. Вост., т. IV, 4. Կասաբեանց—«Վիմական տարեգիր»,
34, «Աղագրական հանդ.» 10, 6.

11. Շման արժանի արնէք զամենայն աշխատեալսն
ի սմա առաւել Զաքիտան եւ զԳրիգորն¹

18. Երկրորդ Ս. Գրիգորի եկեղեցու հարավային որմի վրա

1. Ի Թ ւին ՈԶԶ (686-1237) եւ Գրիգոր Կրդի
Սմբատայ

Արեւելյան անկ.տուն զ աւառ....

խորան եկեղեցի ոյս ինչ պատար.....

Արեւմտ. անկ. հինին յաստուծոյ կս².....

19. Գավթի արեւմտյան սյուները միացնող կամարի վրա

1. Ի տաւնի Փիլիպոսի

2. Առաքելոյն

3. Ս. պատարադ

4. սարկաւազին

5. Սարգսի է անխ-

6. ափան: զՅոհան-

7. էս զՎանահանն յ-

8. աղաւթս յիշեցէք³

¹ Շման արժանեաց, հ. Գ. 363 բաց է թողնված 2 տողի վերջին մասը և 3 ու 4 տողերը, 5, 6 տողերը կարդում է «եղաք հինն ի վերա եղաք զանգա-
կատուն և եկեղեցի»:

Սմբատեանց—«Գեղարքունիք», 174. 175: Բաց է թողնում 3 տողի երկ-
րորդ կեսը, 3-րդ տողը և 4-րդ տողի առաջին կեսը, սկսում է «մեք 3 եղ-
բարս... 5—6-րդ տ. տ. կարդում է «եղաք հինն ի վերայ եկեղեցւոյս ի վերայ
նորա զանգակատուն» բաց է թողնում 7-րդ տողի սկիզբը: 8-րդ—«շուրջը»
կարդում է «սուրբ», բաց է թողնված 9 տողի վերը և 10-ի սկիզբը:

«Աղդ. Հանդես» 2-րդ տողի վերջում է «Եղիշի» փոխարեն կարդում է «խո-
րէշ», 3-րդ տ. ներքում կարդում է «ամուսին» 4 տ. «խաթունին», 5 տողում
չի կարդում «դա», 9 տ. «զատիկ», փոխարեն «տարին», 11 տ. «Զաքիտան»
կարդում է «Զաքոտն»:

4. Կասաճեանց—«Վիմական տարեգիր» 133, Բարխուդարեանց—«Ար-
ցախ», 153—154. Кучук-Иоаннесов—Древн. Вост. т. IV.

Գարեգին Հովսեփյան—«Նյութեր և ուսումնասիրութիւններ», պրակ Ա.,
էջ 10, ոչ լրիվ տեղատը արտադրված «Աղդ. Հանդես»-ից:

² Հավանաբար այս եկեղեցին կառուցող Հեղուր Գրիգորի արձանագրու-
թիւնն է:

³ Աղգաղրական հանդես, 10. 20:

20. Գավթի հարավային սյունները միացնող կամարի վրա

1. Կամարն Աստուծոյ
2. Կիրակոս վար-
3. դասեմս տո-
4. լի ի մեր եկե-
5. ղեցիս Բ. գիրք եւ
6. իմ դահեկան Ա.
7. շուրջառ եւ
8. դրի գդասերս:
9. եւ միաբանքս
10. տուին մեզ Բ. աւր-
11. պատարադ ի տաւ-
12. նի Թագէոսի ա-
13. ռաքելոյն
14. անխափան. դե-
15. դիա եւ զՅով.
16. Սարգիս յիշ/եցէք/¹

Աբ. Գրիգորի մատուռի մուտքի մուտի
դամբարանների վրա

21. 1. Այս է
2. հանգիստ Մկր-
3. տիչ պաք-
4. ոն տէր
5. ին. Թուին Ռ
6. ՃԻԴ (1675)

22. 1. Այս է
2. տապան
3. Սարկ-
4. աւաք
5. քահանայի
6. Թւ
7. ՌՃԽԵ (1696)

¹ Զալալեանց, հ. Ա, 143, «Արաքս», 1892 թ., «Աղբ. հանդես», 10, 20.